

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴԱՍԵՐ

Հարսւային Ափրիկէի գէպքերը ապշեցուցին ընդ-հանուր աշխարհը: Ոչ ոք կը մտաբերէր թէ ափ մը դիւ-դացի ժողովուրդ կրնար ամիսներով զիմազրաւել մեծ պետութեան մը, ու տարակոյսի ենթարկել անոր վերջ-նական յաղթանակին հաւանականութիւնը անգամ:

Անգլիացիները իրենք էն առաջ յանկարծակիի ե-կան: Բայց պաղարին, խորհող ժողովուրդ են, ուստի ո՛չ խելքերնին կորսնցուցին, ո՛չ ալ շուարած մնացին: Ուզեցին Պօէրներու յաջողութեանց գաղտնիքը իմանալ, և զիտցան թէ անոնք լուրձեան մէջ հզօրապէս պատ-րաստուեր են, առանց ո՛ր եւ է կասկածանքի առիթ տա-լու ապագայ թշնամիին: Իսկ իրենք, Անգլիացիները, սխալներու մեծագոյնը գործեր էին չուզելով ո՛ր և է կա-րևորութիւն ընծայել այդ պզտիկ ազգին:

Դժբաղդութեան առջեւ չընկրկող անհատները հզօր նկարագիր մը երևան կը բերեն, ու ձախորդութիւններէն յաջողութիւն կը ծնի անոնց համար: Ազգ մը որ իրա-պէս մեծ է չընկրկիր ո՛ր եւ է հարուածի առջև, ու եթէ մինչեւ իսկ վերջնապէս պարտուի ալ, շուտ կը վերա-կանգնի, օգտուելով գործած սխալներէն: Անշուշտ չենք ուզեր բոնի թէ Անգլիա Պօէրներէն մահաբեր վերքեր ըս-տացաւ, բայց պզտիկներու համար իր արհամարհանքը շատ սուղ կը տուէ: Սակայն այլեւս ինքզինքը խաբել չ'ուզեր: Մամուլը ճշմարտութիւնը պարզեց. գործուած պիտիլը անկեղծօրէն խոստովանեցաւ, պարզեց թշնամիին զօրութիւնը, եւ ժողովրդին հրաւեր կարգաց մեծամեծ գոհողութիւններու յանձնառութեամբ աջակցիլ կառա-վարութեան, ու ապահովել վերջնական յաղթանակը: Շնորհիւ ժողովրդին հանդարտութեանը ու յօծարակամ գոհաբերութեանը՝ կառավարութիւնը մեծամեծ ուժերով կը հետամտի դարմանել առաջին պարտութեանց չա-րիքները:

Բայց Անգլիա պիտի չգոհանայ յաղթանակը ապա-հովելով միայն. աւելի առաջ պիտի երթայ. իր բոլոր սխալները անաչառութեամբ պիտի քննէ, պիտի օգտուի անոնցմէ, և իր վարչութեան ամէն ճիւղերուն, մանա-

ւանդ պատերազմականին մէջ, հիմնական բարենորոգում-ներ պիտի մտցնէ: Մեծ ազգը փոքրիկ ժողովրդէն մեծ դասեր առաւ:

Մենք ալ մեր դասերը առնենք այս գէպքերէն:

Չորս տարի է անպաղար կը խօսուի հայ ազգին դու-ծած քաղաքական սխալներուն վրայ: Այլ սխալները չենք ուրանար, մանաւանդ որ ազգին կեանքին վրայ ազդեցիկ ներդրածութիւն մը ունեցած ըլլալով, երբեք յանձն չենք առներ դժբաղդութեանց պարագային պատասխանատուութիւնները սրիշներուն ուսը միայն բեռնաւորել: Գործուած բոլոր սխալները փնտռելու, քննելու հետամտած ենք ու ասիկ ետքն ալ միշտ պիտի հետամտինք: Հրսպարակաւ կը գրենք այնքանը որ անփոս կը համարինք ազգային շահերուն: Այո՛, պէտք է ազգովին ըմբռնենք մեր սխալները: Անցեալին փորձանքներուն կրկին չհանդիպելու համար պէտք է օգտուիլ անցեալին փորձերէն: Շատ տարրական ճշ-մարտութիւն մըն է թէ սխալ մը չկրկնելու համար նախ պէտք է սխալը ճանչնալ: Սակայն խումբ մը Հայեր կան, որոնց մեծամասնութիւնը առտորական դասակարգին կը պատկանի, որոնք անցեալը խստիւ կը քննադատեն այն նպատակաւ միայն որ հայ ազգը յուսահատութեան մղեն: Վայնասուններ արձակողները ծայրայեղ խոհեմութեամբ կը զգուշանան ազգը սրտապնդող ո՛ր և է քաջալերական բառ արտասանել: Երբեք անցեալին մէջ չեն ուզեր տես-նել ազգին բարոյական ուժը հաստատող ո՛ր և է գործ: Ազատագրութեան ո՛ր և է խորհուրդ սճիր կը համարին: Իրենց գերագոյն նպատակն է ծիւրել ազգին ամէն յոյ-սերը, հիւժել ազգին հաւատքը, եւ հայ ժողովուրդը բե-րել հասցնել բարոյական այնպիսի անկուճի մը որ ինքն իր վրայէն վերցնէ իր վստահութիւնը: Ասոնց ազգա-սիրութիւնն է հայ ազգը համոզել թէ ինք միշտ սխալե-լու դատապարտուած է ամէն անգամ որ իր վիճակին բարւոքմանը համար ո՛ր և է ձեռնարկ մտաբերէ կամ փոր-ձէ: Հայ ազգը պէտք է հաւատայ թէ իր զոյւթիւնը պահ-պանելու էն նպատաւոր պայմանը ստրկութիւնն է:

Այո՛, հայ ազգը ոռուկութիւրք պատերազմին վերջա-նալէն ի վեր քաղաքական սխալներ գործեց, բայց այդ սխալները պէ՛տք է որ մեզի յուսահատեցնեն: Մենք քա-ղաքական վարչութեամբ կազմակերպուած ազգ մը չենք:

չունէինք զիւսանազէտներու ժարմին մը որ խորաթափանց աչքերով իր շուրջը ըննէր ու հեռունները պրպտէր. չունէինք զերագոյն զեկալարութիւն մը որ ազդին ուղղութիւն մը տար իր ազգային գոյութեան պահպանման ձեռնարկներուն մէջ: Եւ սակայն ահա Անգլիա մը որ մեծատաղանդ, բազմափորձ քաղաքագէտներ եւ զիւսանազէտներ ունի, եւ ո՛ր եւ է միջոց չի պակսիր իրեն աշխարհիս ամէն անկիւնը անցած դարձածը գիտնալու համար, ու կը գործէ սխալ մը սրմէն ինքն ալ յանկարծակիի կուգայ, կ'ահաբեկի՝ աղետաւոր ապագայի մը երկիւղով:

Ընդարձակենք սխալներուն շրջանակը: Պերլինի վեհաժողովին գումարումէն մինչեւ այսօր եւրոպական մասուլը ըննադատած է ու կը ըննադատէ Սան-Սթեֆանոյի դաշնագրին վերաբնութեան առթիւ գործուած սրխալները: Նախ Ռուսիան սխալած կը համարին, վասն զի յաղթական պատերազմէ մը ետքը իր կնքած դաշնագրերէ պետութեանց վաւերացմանը ենթարկելով կորստնցոց իր յաղթութիւններով ստացած իրաւունքներուն մեծ մասը: Ֆրանսա Պերլին աշակցելով հակառուս քաղաքականութեան՝ շատ կորուստներ ունեցաւ: Գերմանիոյ առջև հարթեց Արևելքի վրայ անոր ապագայ գերիշխանութեան կողանը: Գերմանիա անիրաւելով Ռուսիոյ, պարտաւորեց զանիկա Ֆրանսայի բարեկամութեանը հետապնդիլ, և օր մըն ալ կազմուեցաւ Ֆրանքոսուս նիգալակցութիւնը որ կը չափաւորէ Գերմանիոյ քաղաքական ազդեցութիւնը: Անգլիոյ համար շատ ծանր եղան Սան-Սթեֆանոյի դաշնագրին բեկանումին հետեւանքները: Թիւրքիոյ մէջ անգլիական ազդեցութիւնը հետզհետէ պակսեցաւ. ոուսեֆրանք նիգալակցութիւնը ամէն ուրեք Անգլիոյ դէմ կը կանգնի: Իտալիա Պերլին հետեւած քաղաքականութեամբ Ֆրանսայի զիւրացուց թունուզի զրաւումը: Աւստրիա իւրացնելով Հէրսէքն ու Պոսնան նպատաւորեց գերմանական ծրագիրները որոնց նպատակն է Աւստրիան բոլորովին Արեւելքի կողմը նետել:

Պերլինի դաշնագրին համար յայտնուած այս կարծիքներուն արմէքը ինչ որ ալ ըլլայ, բայց եւ այնպէս յայտնի իրողութիւն մըն է թէ Պերլին մեծամեծ քաղաքական սխալներ գործուեցան. ու 1878էն յետոյ Թիւրքիոյ պատճառաւ Եւրոպա շարունակ տագնապալից վիճակի մէջ գտնուեցաւ, կացութիւն մը որ Պերլինի վեհաժողովին կը պարտինք: Այսպէս ուրեմն, գոնէ Եւրոպայի մասուլին ու բազմաթիւ քաղաքագէտներու համոզմանը համեմատ, մեծ պետութեանց մեծ զիւսանազէտները իրարու հետ գալով ուրիշ բան չեն ըրած բայց եթէ իւրաքանչիւր պետութեան շահերը վտանգող մեծ սխալներ: Ինչո՞ւ մենք Հայերս յուսահատինք եթէ մեր պարզուկ եկեղեցականները իրենց տեսութեանց մէջ սխալք են. կամ եթէ, Հայաստանի բարեկարգութեանց համար եւրոպական միջամտութիւն մը հրաւիրելու նպատակաւ Սասունէն մինչև սեպտեմբեր 18 30 կատարուած ձեռնարկները թէև շատ լուրջ սկզբնաւորութիւն մը ունեցան,

բայց վերջին պահուն չտուին յուսացուած արդիւնքը Ռուսիոյ փոփոխամտութեանը պատճառաւ: Ու ինչ որ մեզի կը սրտապնդէ այն է թէ Ֆրանսա մինչեւ այսօր խորապէս կը ցափ, ու դեռ պիտի ցափ ալ, միացեալ-նաւատորմ մը Վոսփոր մտցնելու համար անգլիական առաջարկը Պ. Հանթոն մերժած ըլլալուն համար, ինչպէս տասներեք տարի առաջ ալ միևնոյն Ֆրանսան չարաչար սխալած էր Երկրպետը միասին գրաւելու համար անգլիական առաջարկը ընդունած չըլլալուն:

Հայ ժողովուրդը չսխալեցաւ եւրոպական միջամտութեան վրայ յոյս դնելով: Դարու մը օսմանեան պատմութիւնը ազդին իրաւունք կուտար Հայաստանի վիճակին բարեփոխութիւնը Եւրոպայէն ակնկալել: Հայ ազգը չսխալեցաւ նաև երբ ընդհանուր սկզբունքով ընդունեց թէ առանց յեղափոխական կողմի ներքի չէ ո՛ր և է աշակցութիւն ակնկալել Եւրոպայէն: Սխալեցանք երբ Եւրոպա նստող յեղափոխական վարիչներու վրայ չափազանց համարում ունեցանք, և անոնց ապաւինելով պէտք չտեսանք գոնէ առժամայ ընդդիմադրութեան մը նախապատրաստութիւնները ընելու: Մեր նպատակը այժմ այդ խնդիրներուն վերադառնալ չէ, այլ միայն յիշեցնել որ նոյն իսկ ամենամեծ ազդ մըն ալ կարող է չափազանց փութաշանութեամբ սխալիլ, ու այդ սխալումը յուսահատութեան պատճառ մը չ'ըլլար:

Մենք ալ նոյնպէս, հակառակ մասնաւոր խմբակի մը ջանքերուն, չենք յուսահատած, գոնէ ազգային մեծամասնութեամբ: Միանգամայն պէտք զգացած ենք լրջախոհ ուղղութեան մը որուն նշանաբանն է թէ լիկ անձնուիրութիւնը բաւական չէ յաղթանակելու համար:

Հայկական խնդրին էն յուսալից օրերը, 1893ի կիսուն, անգլիացի մեծ քաղաքաշէտ մը, Սըր Չարլզ Տիլք, յայտարարեց թէ բարենորոգումներու հարցը տակաւին երեք չորս տարի ալ պիտի քաջըլի, եւ լուծումը անկէ ետքը պէտք է յուսալ: Արտաքին գործերու նախկին խորհրդականը անշուշտ թուաբանական ճշգրտութեամբ չէր կարող խօսիլ, մասնաւոր որ յանկարծածին դէպքեր կրնան հանդամանքները յեղաշրջել. բայց ինչ որ ալ եղած ըլլան այս չորս տարուան դէպքերը, Թիւրքիա արտաքին քաղաքականութեամբ որքան փայլուն կ'երևնայ՝ իր ներքին կացութիւնը շատ մթին է, ու նոյն իսկ իսլամներուն ալ համբերութեան չափը լեցուած կ'երևի: Երկրին վրայ տոկալու կարողութիւն չէ մնացած: Կրնանք ենթադրել թէ հիմնական փոփոխութեանց թուականի մը սկզբնաւորութիւնը տեսնենք: Մեր անցեալ սրխալներուն վրայ ողբալով ժամանակ չանցնենք, ու նոր կացութենէն օգտուիլ զիտնանք:

Վ Ր Է Ժ Ը

Ա.

Բիրէ, քարափին մօտ, սրճարանի մը մէջ, անկիւն մը քաշուած, փախտական երկու հայ երիտասարդ կը խօսակցէին: Երկուքն ալ Պոլսեցի էին, մին Խասագեղէն և միւրը Սամաթիայէն: Խասագեղցին, քսանըհինգ տարեկան, հասակաւոր, կայտառ, կարմիր այտերով երիտասարդ մըն էր, որուն խոշոր ու սեւ աչքերը բարի, միամիտ զէմք մը կուտային իրեն: Միւրը, ընդհակառակը, տոգոյն ու նիհար, հիւանդոտ պատանի մը կ'երեւնար, հազիւ քսան տարեկան: Պոլսէն միեւնոյն շոգենաւով փախած էին և շոգենաւին մէջ ծանօթացած իրարու:

Խասագեղցին իր հօրը ու եղբօրը հետ շուկան ոսկերիչ էր ու բարեկեցիկ վիճակի մը տէր: Պանքային ցոյցին իրեկունը կըցեր էր ինքզինքը շոգենաւ մը նետել և ապաստանիլ Գատը-Գիւղ ազգականի մը տունը: Երկու օր ետքը հօնն եկած գտած էին զինքը իր մայրն ու քոյրը ու պատմած այն սոսկալի եղանակը որ տեղի ունեցեր էր: Տուներնին թալլուած ու աւերակ դարձած էր բոլորովին և հայրն ու եղբայրը սպաննուած:

— Ախ, այդ Ալրամը, Աստուծմէ գտնայ... կը գոչէր մայրը անընդհատ, զլուխն ու ծանկերը ծեծելով:

Ալրամ իրենց հրեայ զրացին էր. ջարդի միջոցին, փոխանակ եկեղեցի երթալու, անոր տունը ապաստանած էին, իրենց զրամն ու գոհարեղէնները հետերնին առած, յուսալով որ աւելի ապահով պիտի ըլլան հոն: Բայց երբ թիւրքերը եկած էին տուները կոխելու, Ալրամ պատուհանէն ցոյց տուած էր խուժանին անոնց բնակարանը և յետոյ յանկարծ կոխ մը հանելով Խասագեղցի երիտասարդին հօրն ու եղբօրը հետ՝ դուրս նետած էր զիրենք, ուր փողոցին մէջ բրահար սպաննուած էին:

Ոսկերիչը չորս հարիւր ոսկիի մօտ գումար մը և իր կնոջ ու աղջկան գոհարեղէնները ու արծաթեայ սպասանք հետն առած և յանձնած էր Ալրամին որպէս զի տանը մէջ ապահով տեղ մը պահէ գանոնք: Ի զո՛ր ընտանիքը քանի մը օր ետքը կը պահանջեն իրենց իրեղէնները, Ալրամ բացարձակապէս կ'որոնայ յանձնուած աւանդը և կը սպաննայ դատ բանալ, ըսելով թէ իր պատիւը կ'արատաւորեն:

Երիտասարդը յանկարծ իրենց տան վրայ պայթած այդ ահռելի աղէտքն սասանած, ինքզինքը դուրս նետած էր Պոլսէն, մայրն ու քոյրը իրենց ազգականին տունը թողլով: Հիմակ Բիրէի կամ Աթէնքի մէջ կը ջանար արհեստը ի գործ դնել ապրուստ ճարելու համար: Սամաթիացին, ինչպէս ըսի, զեռ պատանի մըն էր, զըպրօցէն նոր ելած, վաճառականի մը քով զրազրութեան սկսած: Զարդը հարուած մը չէր կրցած տալ իրեն, որովհետև որք մնացած էր արդէն պզտիկոց, առանց

ազգականի, միայնակ աշխարհի մէջ և քահանայի մը պաշտպանութեամբը մեծցած: Քահանան տասներկու տարի, շարունակ, շահագործած էր զինքը, իր որբութիւնը գանձանակի մը պէս պտտցնելով թաղին մէջ ու զրամ հաւաքելով: Գործի եղած օրն ալ պարտաւորակ մը ստորագրել տուած էր անոր՝ որպէս զի մաս առ մաս վճարել տայ իրեն տասներկու տարուան միջոցին ըրած ծախքերը:

Յաւ մը միայն ունէր Գարեգին, Սամաթիացի պատանին, ցաւ մը զօր կ'արտայայտէր անզուսպ ու սրտաբուխ հառաչանքով մը, ամէն անգամ որ ջարդին խօսքը բացուէր.

— Ախ, սա իմ տէրտէրս, անիծեալ տէր Սարգիսն ալ ջարդելու չէին . . .

* * *

— Ի՞նչ լուր Պոլսէն, հարցուց Գարեգին, վայրկեանէ մը ի վեր ատրած լուրերը խզելով:

— Աղէկ բան մը չի կայ, այսօր նորէն նամակ առի մերիններէն, պատասխանեց Արշակ, Խասագեղցի երիտասարդը, շատ մը զէջ լուրեր: Օ՛Ք, ա՛լ կը յուսահատիմ կոր:

Յետոյ յանկարծ կոտուիլ սեղանին զարկաւ ու կատաղի ձայնով մը պոռաց.

— Շօնշանորդի մարդ... Աստուծմէ գտնայ:

— Ի՞նչ կայ, նորէն Ալրամին վրա՞յ է ինդիրը, հարցուց Գարեգին:

— Ա՛ռ կարգա նամակը:

Ու Արշակ իր բարեկամին տուաւ քրոջը իրեն ուղղած նամակը:

Պատանին սկսաւ կարդալ բարձրաձայն.

« Սիրելի եղբայրս, մեր վիճակը ա՛լ բոլորովին անասանելի եղաւ, չեմ գիտեր ո՞ւր պիտի երթայ վերջերնիս: Խասագեղցի տունը աւերակ դարձեր է, ո՛չ զուռ ձգեր են, ո՛չ պատուհան, իսկ կարասիներէն բա՛ն մը չէ մնացած, սեռիքին տախտակները անգամ քակեր տարեր են, նոյն իսկ հողին մէջ թաղուած ջուրին քիչքը մէջտեղ չի կայ: Միայն տան նորոգութեան եւ քիչ մը կահ կարասի շրակելու համար առ նուազն քառասուն ոսկի պէտք է ու գիտես որ ստակ մը չի կայ խեղճ մօրս քով: Ալրամէն գոնէ քիչ մը բան փրցնելու համար ամէն աղաչանք ու պաղատանք անօգուտ եղաւ: Հինգ օր առաջ Մարտիկ աղան նորէն գնաց զինքը տեսնելու եւ ըսելու համար որ գոհարեղէններէն ու արծաթեղէններէն վազ անցանք, գոնէ թո՛ղ 80 ոսկի տայ եւ խնդիրը լինցնենք: Պարզապէս մարդը զոնէն վճարեց էին: Սոսկալի բաներ իմացանք իր վրայ: Մեր ամբողջ կահ կարասիները ինք ու չինչ զինով ծախու առեր է տաճիկներէն, ասկէ դատ ջարդուողներուն հագուստներն ալ ամենքը իրեն բերեր են ծախելու համար: Մալոռաններ լեցուցեր է զեղին կողոպուտներէն ու տարեր ծախեր է: Երկու շաբաթուան մէ

քանի մը հազար ոսկի շահեր է կ'ըսեն կոր: Երկի ալ լուր առինք որ Պոլսէն ձգեր փախեր է, որովհետեւ տաճիկները ստակ կը պահանջեն կոր եղեր իրմէ և սպառնացեր են ձեռքէն առնելու իր կողոպուտը: Աստուծմէ գտնայ շունը: Ընտանիքը դեռ հոս է եղեր, բայց ան ալ քանի մը օրէն պիտի երթայ: Ինչպէս կը տեսնաս ա՛լ ատ կողմէն յոյսերնիս բողբոջին կտրելու ենք: Անօրէն մարդը թէ՛ հօրերնուս ու եղբորնուս մահուանը պատճառ եղաւ եւ թէ՛ մեզի ասանկ կողոպուտեց ու աւուր հացի կարօտ ձգեց: Աստուած ինք ողորմի մեզի:»

Երբ նամակին ընթերցումը աւարտեցաւ Արշակին աչքերը լեցուած էին: Իրենց վիճակին ամբողջ անդամանելի դաճումը ինքն իրենք, — ընտանիքին կործանումը, շնչուր: Եւ անգոր համակերպութեամբ կը կրկնէր կամաց կամաց, ինքնիրեն խօսելու պէս.

— Աստուծմէ գտնայ, Աստուծմէ գտնայ...

Պարեգին նոյնպէս յուզուած էր այդ անլուր հրէշութիւններու պատմութենէն, զոր արդէն քանի մը անգամ լսած էր իր բարեկամին բերնէն: Աչքերը կը վառէին ու նիհար այտերը կաս կարմիր կտրած էին:

— Ա՛խ, ձեռք տային ատ գազանը . . . ա՛խ մէյմը ձեռքս իյնար:

Նորէն լուսութիւնը տիրեց երկու խօսակիցներուն վրայ, ծա՛ր, ճնշող լուսութիւն մը որ կը ճզմէր զիրենք:

— Դուրս ելլանք քիչ մը, առաջարկեց Պարեգին ոտք ելլելով:

Դուրսը, քարափներուն վրայ ու նաւահանգստին մէջ, իրարանցում մը կը տիրէր:

— Կ'երեւայոր շոգենաւ մը կուգայ կոր, ըսաւ Պարեգին:

Եւ իրա՛ւ ալ հեռուէն աւտարիական շոգենաւի մը ցոռկը կ'երեւար:

— Պոլսէն եկող շոգենան է որ հոսկէ անցնելով Թրիէստէ կ'երթայ, պատասխանեց Արշակ:

— Ծովեզերքը տեղ մը նստինք ճամբորդները դիտելու համար:

Ու տեղաւորուեցան քարափներուն վրայ սրճարան մը: Շոգենաւը քանի մը վայրկեանէն մտաւ նաւահանգիստ ու հարիւրաւոր նաւակներ պաշարեցին զայն:

Կէս ժամ ետքը ճամբորդները դուրս կ'ելլէին նաւակներով: Արշակ որ անուշադիր կը դիտէր նաւակներուն երթ ու դարձը, յանկարծ ազաղակ մը արձակեց.

— Ա՛լրամը... Ա՛լրամը կուգայ կոր:

Ու այլայլած, գունամափ, նաւակին կը նայէր որ զկտի իրենց կուգար:

Պարեգին մէկէն ոտք ելաւ, Արշակին թեւէն բռնեց, ու կտրուկ, հրամայական ձայնով մը ըսաւ բարեկամին.

— Գնա՛ պահուրտէ սրճարանին մէջ, շո՛ւտ, չըլլայ որ Ա՛լրամը քեզ հոս տեսնայ:

Արշակ անմիջապէս մտաւ սրճարան, առանց հասկընալու թէ ինչո՞ւ իր բարեկամը այդպէս կ'ուզէր զինքը ծածկել:

— Մինչև որ չի գամ փնտոնելու, տեղեկ չշարժիս, հը-

րամայեց Պարեգին:

Ա՛լրամը բերող նաւակը մօտեցած էր քարափին ու Հրեան կը պատրաստուէր դուրս ելլել: Պարեգին ծովեզերքը կեցած, անտարբեր երևոյթով մը կը դիտէր զանիկա: Վաթսուն տարեկանի մօտ ծերունի մըն էր, ձեռմակ, պատկառելի մօրուքով: Երկար մուշտակ մը հագած էր ու վիզը շալ մը փաթթած: Ոտքը քարափին վրայ դնելէն ու բեռները դուրս հանել տալէն ետքը նաւավարին ֆրանք մը տուաւ իբր վարձք:

— Երկու ֆրանք, զոչեց նաւավարը, առակը ետ դարձնելով եւ երկու մատերը ցոյց տալով:

Ա՛լրամ զլսի մխտական շարժումով մը նորէն մէկ ֆրանքը նետեց նաւակին մէջ: Բայց նաւավարը լեզու չգիտցող օտարական մը կողոպուտու առիթն օգուտ քաղել ուզելով, ստակը վերադարձուց Հրեային և սիտա յունարէն բարձրաձայն բողբոջներ բառնալ, որոնց Ա՛լրամ թիրբերէն կը պատասխանէր: Բանակոխը վէճի մը յանգելու մօտ էր երբ Պարեգին միջամտեց և յունարէն նաւավարին հասկցուց թէ մէկ ֆրանքէն աւելի պահանջելու իրաւունք չունի և թէ ոստիկանը շատ մօտ էր խնդիրը անոր ձեռքով կարգադրել տալու համար: Ետոյ դարձաւ Ա՛լրամին ու թիրբերէն լեզուով ըսաւ թէ աւուր բաւական էր: Ա՛լրամ այս անակնկալ օգնութենէն քաջալերեալ, շնորհակալ եղաւ հայ պատանին, Ետոյ, մէկէն, հարցուց կասկածոտ ձայնով մը.

— Հոստեղացի՞ ես գուն:

— Ո՛չ, Պոլսեցի եմ, պատասխանեց Պարեգին:

— Պոլսեցի՞ . . . հա՛յ ես ուրեմն:

— Չէ՛, հայ չեմ, ըսաւ Պարեգին խրոխտ կերպով մը, իբր թէ նախատինք մը ընդունած ըլլար. յոյն եմ . . . էլէնու:

— Հա՛, շատ աղէկ, շատ աղէկ:

Ու տեսակցութիւնը շարունակուեցաւ: Ա՛լրամ յայտնեց իր նոր ծանօթին թէ երկու շաբաթի չափ պիտի մնար Բիրէ, սպասելով իր ընտանիքին, ու Ետոյ անոնց հետ պիտի երթար Եգիպտոս: Խնդրեց Պարեգինէն որ պանդոկ մը ցոյց տայ իրեն, և երկուքը, բեռները մարդու մը տալով, ուղղուեցան կայարանին մօտ պանդոկ մը:

Կէս ժամ ետքը Պարեգին ղարձաւ Արշակին մօտ, որ միշտ սրճարանին ներսը կը սպասէր:

— Եկո՛ւր հիմակ առանձին տեղ մը երթանք խօսելու, զոչեց յաղթական, խասգողցիին թեւը մտնելով:

— Ի՛նչ կայ, ի՛նչ եղաւ, հարցուց միւսը ապշութեամբ:

— Աղէկ, ամէն բան կարգին է . . . ուզածիս պէս:

Ա՛լրամին հետ խօսեցայ, զրեթէ բարեկամացայ: Չինքը պանդոկ մը տարի, վազն ալ ժամադիր եղանք, առտուն պիտի երթամ ու կերակուրը մէկտեղ պիտի ուտենք:

— Ի՛նչ, այդ շունին հետ բարեկամութիւն կ'ընես, պատասխանեց Արշակ սրտմտած:

— Ետքը կը հասկնաս, ըսաւ Պարեգին ժպտելով, գուն ինծի մտիկ ըրէ . . .

— Եկած ատենը իս ինչո՞ւ սրճարանը խօթեցիր :
— Որովհետև պէտք չէ որ քեզի հոս տեսնայ, կը հասկնամ...

— Չէ՛, բան մը չեմ հասկնար :

— Որովհետև եթէ քեզ ինձի հետ տեսնայ, ինչ պիտի կատարածի...

— Է՛... յետո՞յ :

— Յետոյ, հետո պիտի չմտերմանայ ու վստահութիւնը պիտի չկրնամ գրաւել : Մինչդեռ անպատճառ պէտք է որ հետը բարեկամանամ, առանց որ եւ է կատարած արթնցնելու մտքին մէջ :

Արշակ մտիկ կ'ընէր իր բարեկամը առանց հասկընալու : Գարեգին մէկէն Արշակին թելը մտաւ և ցած, բնական, գրեթէ անոյշ ձայնով մը ըսաւ.

— Այդ մարդը քու հայրդ ու քու եղբայրդ սպաննել տուաւ, ձեր ունեցածը յափշտակեց, մայրդ ու քոյրդ թշուառութեան մատնեց, հիմակ մեր ձեռքը ինկաւ, պիտի մեղսենք զինքը...

Խօսեցողին՝ սահմակած՝ իր պատանի բարեկամին երեսը նայեցաւ :

— Այո՛, շարունակեց միւսը, հետը բարեկամութիւն պիտի հաստատեմ, վստահութիւնը պիտի գրաւեմ, առանձին տեղ մը պիտի տանիմ, դուն ալ պիտի գաս եւ հո՛ն պիտի մեղսենք զինքը :

Գարեգինը դրպանէն սիկարէթ մը հանեց ու սկսաւ ծրխել, սպասելով որ Արշակ պատասխան մը տայ իր ըսածներուն, բայց անիկա տարօրինակ նայուածքով մը կը նայէր իրեն, առանց բերանը բանալու, անորոշ վախ մը զգալով իր բարեկամին մտաւորական վիճակէն :

— Է՛... Ի՞նչ կ'ըսես այս որոշումիս, հարցուց պատանին անհամբերութեամբ :

— Իրաւցնէ՛ ատանկ բան մը կը մտածես կոր, թէ... կատակ կ'ընես կոր, պատասխանեց Արշակ վերջապէս :

— Կատակ, գոչեց Գարեգինը զայրացած. անիկա կատակ ըրաւ հայրդ ու եղբայրդ մատնելով տաճիկներուն ձեռքը, տաճիկները կատակ ըրին սոփաներուն տակ ջարդուկտոր ընելով զանոնք, կատակի՞ համար գողցաւ ձեր ստակը, ձեր դոհարեղէնները, ձեր ամէն ունեցածը, ու վաղը երբ քու մայրդ ու քոյրդ մուրալու ըլլան կամ անօթի մեռնին Ալլամին երեսէն, կատակ պիտի ըլլայ քեզի համար :

— Բայց ես մարդ չեմ մեղուցած... չեմ կրնար... Աստուծմէ՛ գտնայ իր պատիժը :

— Ես անգամ մը, Սամաթիա, կատղած շուն մը մեղուցի, ու անգամ մըն ալ Փլորիա խոշոր օձ մը... շատ զիւրիկ է, քանի մը անգամ հաստ փայտով մը զլխուն կ'ինջեցնես, կը լմնայ :

— Չէ՛, չէ՛, չէ՛, գոչեց Արշակ, մի՛ ըսեր ատանկ բաներ, գոցէ՛ ատ խօսքերը :

— Լաւ, հասկցայ, պատասխանեց Գարեգինը վճռաբար, քե՛նէ խեղ չի կայ, բայց նորէն քեզի կ'ըսեմ, երկու շաբաթ մէջտեղ պիտի չելլես, իմացա՛ր : Տունդ հրատէ՛ :

կամ, եթէ դուրս ելլես, Փաշա Լիմանիի կողմերը դո՛ւ պտըտէ. իսկ իմ քովս բնաւ մի գար : Ե՛ս, առանձին, պիտի մեղսեմ զինքը, եւ վա՛յ քեզի եթէ փորձես արգելք ըլլալ ասոր...

Ու Գարեգինը դաժան նայուածքով մը բաժնուեցաւ իր բարեկամէն :

Բ.

Արշակ քայլերը ուղղեց դէպի տուն, տակնուվրայ եղած իր բարեկամին խօսքերէն : Երբեք չէր կրնար հաւատալ թէ լրջօրէն խօսած էր Գարեգինը. « Կ'երևայ որ իս փորձելու համար ըսաւ այդ բաները » կը մտածէր : Եւ տեսակ մը սնապարծ զհիշմանակութիւն կը զգար թաւարդին մէջ ինկած չըլլալուն համար : Բայց ինչո՞ւ այդ փորձը ընել ուզած էր. կատակի՞ համար միայն. եւ սակայն Գարեգինը, սրուն հետ ամիսէ մը ի վեր գրեթէ ամէն ժամ միասին կ'ապրէր, հակառակ իր փոքր տարիքին՝ միշտ լուրջ ու խոհուն եղած էր : Երբեք կատակ մը չէր լսած անոր բերնէն, երբեք թեթևութիւն մը չէր տեսած վրան : Ընդհակառակը միշտ մտածկոտ տխրութեամբ մը ընկճուած էր ան, ու Արշակ իր նոր բարեկամին այս վիճակը վերագրած էր անոր վաղահաս որբութեան և մանաւանդ ականատես եղած ջարդերուն ահռելի տպաւորութեանը :

— Չէ՛, կը շարունակէր մտածել Արշակ, այդ տղան բոլորովին կատակ չէր ըներ կոր, ատանկ կատակ չ'ըլլար, մանաւանդ այս պարագաներուն մէջ : Ասկէ գտա, խօսած ատենը ձայնին ու նայուածքին մէջ տարօրինակ բան մը կար որ զիս խօսկեց : Կ'երևայ որ նամակին ընթերցումէն զուրկ տաքցաւ, ու քիչ մը ետքն ալ, Ալլամին անակնկալ գալուստը բոլորովին գրողեց զինքը : Յանցանքը իմա էր սր նամակը կարդացի իրեն : Ինչ որ է, այս գիշեր կը քնանայ ու վաղը կը մոռնայ ամէն բան :

Ու Արշակ՝ քիչ մը հանդարտած՝ մտաւ իր տունը : Իրիկուան, երբ կերակուրի ատենը եկաւ, դուրս ելաւ և իր սովորութեանը համեմատ ուղղուեցաւ քարափներուն վրայ գտնուող ճաշարան մը : Բայց հազիւ թէ քայլ մը առած էր, յիշեց Գարեգինին պատուէրը :

— Հիմակ երբոր իս տեսնայ՝ պիտի բարկանայ, մըտածեց, քանի որ ըսաւ թէ մէջտեղ չերեւամ :

Եւ պահ մը վարանեցաւ առաջ երթալու, բայց պըղտիկ ջանքով մը յաղթեց իր վարանումին և ինքզինքը քաջալերեց խորհելով. — « Ի՞նչ, այդ խելէն խօսքով պիտի շարիմ. անիկա ի՞նչ կը խառնուի ինձի : »

Ու շարունակեց ճամբան : Քարափներուն մօտ հասած էր, երբ նսրէն կեցաւ :

— Չէ՛, աւելի լաւ է ետ գտնամ, կը խորհէր, Գարեգինին յուզմունքը զեռ չէ անցած անշուշտ, ու երբոր ինձի տեսնայ նորէն պիտի բորբոքի պարսպ տեղը : Քիչ մը ջղային մէկը կ'երևայ կոր, հետը անուշ երթանք, մանաւանդ որ խեղճ տղան գրողուելուն պատճառը ես եղայ, անուղղակի կերպով :

Արշակ վերադարձաւ իր տան մօտերը և այն դիշեր հոն ճաշարանի մը մէջ կերաւ կերակուրը:

Կերակուրէն ետքը իր սենեակը քաշուեցաւ իր քրոջը պատասխանելու համար: Այս առթիւ Արշակ նորէն կարգաց անտուան ընդունած նամակը: Միտքը արդէն պաշարուած Գարեգինին խօսքերէն, այդ ընթերցումը ալ բոլորովին վերանորոգեց իր օրուան յուզումները:

— Աստուծմէ գտնայայդ Ալրամը, կը գոչէր ինքնիրեն:

Գրիչը առաւ զրեղու համար, բայց չկրցաւ տող մը բան գրել. մէկդի նետեց, ու ոտքի ելաւ:

Խելոյեղ կը պտտէր սենեակին երկայնքը, դուրսը կրակներու մէջ: Յիշողութեանը կը ներկայանար ընտանիքին ամբողջ քայքայումը, հայրն ու եղբայրը խառնեղի փողոցներուն մէջ ջարդուկոտոր, ու յետոյ մայրն ու քոյրը փախըստական, Գատը—Գիւղ ազգականի մը տունը, ատանց ապրուստի, գրեթէ անօթութեան մասնուած, ու ինք, անոտոյց, թափառական, հագիւ օրուան հացը ճարելու կարող և բոլոր ասոնց պատճառը, այդ Հրեան, Ալրամը, որ գիրենք փճացնելէ ետքը, հանգիստ կ'երթար վայելելու իրեններուն հետ իր ոճրին պառուղը, Եղիպտոս, ապահով ու անփոյթ: Ու կը յիշէր Գարեգինին խօսքերը...

— Չէ, չէ... անկարելի է, գոչեց յանկարծ ու ինկաւ անկողին վրայ:

Ե. Օ.

(Շարունակելի)

ԽԱՐԲԵՐԴԻ ԵՓՐԱՏ ԳՈՒԷՃԸ

Ամերիկեան Պորտի քարտուղար Պատ. Ճէյմս Պարզըն Միչընըրթի Հէրըլտի մէջ ուսումնասիրութիւն մը հրատարակելով խորհրդի Եփրատ գոլէճին վրայ, կոչում կ'ընէ ամերիկացի բարեսերներուն առ նուազն 4000 ոսկիի գումար մը աւելցնելու գոլէճին յատուկ դրամագլխին վրայ որ Ամերիկա կը պահուի եւ որ այսօր տարին 800 ոսկի եկամուտ կը բերէ: Կը սիրենք յուսալ թէ Պատ. Պարզընի կոչը անլսելի պիտի չմնայ, և Եփրատ գոլէճը պիտի կրնայ անխափան շարունակել քաղաքակրթութեան գործը որ այսքան տարիէ ի վեր անոր բաժինն է մեր հայրենիքին մէջ:

1855ին էր որ միսիոնարները առաջին անգամ վարժարան բացին խորհրդ մանչերու համար, քիչ ետքն ալ աղջկանց համար: Աշակերտներուն թիւը քիչ քիչ աւելցաւ, և ուսման աստիճանն ալ բարձրացաւ, այդ շրջանակին մէջ կրթութեան պահանջին հետզհետէ աճելուն համեմատութեամբ: Շատ շանցած, վարժարան մը հաստատուեցաւ այն երիտասարդներուն համար որոնք քարոզչութեան կը պատրաստուէին, եւ ժամանակ մըն ալ ետքը գեշերթիթի բարձրագոյն վարժարան մը թէ՛ մանչերու եւ թէ՛ աղջկանց համար:

1878ին էր որ Գրոսպլի Հուիլըր կազմակերպեց Եփրատ գոլէճը, որ այլ ատենը, սեփականութեան իրաւունքը պաշտպանելու և դրամական հսկողութիւնը դիւրացնելու նպատակաւ, Մասաչուսէց նահանգին մէջ արձանագրուեցաւ «Հոգաբարձութիւն Հայ գոլէճին Կրամագլխին» անունով: 1888ին, թիւրք կառավարութիւնը ընդդիմացաւ Հայաստան անունին որ զպրոցին բոլոր վերակարգերուն վրայ արձանագրուած էր, ու անունը օրինապէս փոխուեցաւ «Հոգաբարձութիւն Եփրատ Գոլէճի Կրամագլխին» անունան:

Գոլէճը երկու սրոշ բաժանում ունի, մանչերու եւ աղջկանց համար: Ուսուցիչներէն մէկ քանին երկու կողմն ալ կը դասախօսեն, բայց դասարանական աշխատութիւնները բոլորովին զատ են: Վեց ամերիկացի և երեսունը չորս հայ ուսուցիչ կայ, որոնք ուսուցչական մարմինը կը կազմեն: Կերպով մը այս գոլէճը Պորտին ներքեւ դանուող միւս բոլոր գոլէճներէն կը տարբերի, անոր համար որ՝ մէկ տեսչութեան ներքեւ՝ ամէն աստիճանի և երկու սեռին համար վարկարաններ կը գտնուին: Ասիկա միշտ աչքի առաջ ունենալու է երբոր աշակերտներուն ամբողջ թիւը կը ներկայացուի: Պատ. Ֆրանք Կէյզզ գոլէճին նախագահն է, և Միւ Մէրի Տէնիլըզ աղջկանց բաժնին տեսչուհին: 1898—99 զպրոցական տարեշրջանին, աշակերտներուն թիւն էր.

	Մանչ	Աղջիկ	Գումար
Գոլէճ	33	37	70
Բարձրագոյն վարժարան	72	37	109
Միջին	120	89	209
Նախակրթարան	132	120	252
Մանկապարտէզ	191	220	411
	548	503	1,051

Հազարէն աւելի որբեր կան խորհրդի որբանոցներուն մէջ, ու ասոնցմէ 350ը Գոլէճին վարժարաններուն մանկապարտէզը եւ նախակրթարանները կը յաճախեն, այնպէս որ աշակերտներուն թիւը, երբ ի բաց անենք որբերը, 701 է: Աշակերտներուն թիւը այժմ աւելի է քան 95ի ջարդերէն առաջ: Որբերով մէկտեղ, 485 աշակերտի յաւելում մը կայ:

Ջարդերուն ատեն, Գոլէճին բոլոր շէնքերը, բացի երկուքէն, ոչնչացան: Այդ թուականէն ի վեր, ուրիշ շէնքեր վարձուած են, եւ գործը նոյն կանոնաւորութեամբ կը շարունակէ: 1898ին, Գոլէճին և իր յարակից ամէն ճիւղերուն ծախքը եղած է 8,386 տուար, որուն 4,487 տուարը գոյացած է աշակերտներուն թոշակէն, և մնացածը Միացեալ-Նահանգները գանուող դրամագլխին եկամուտէն եւ Գոլէճին բարեկամ անձերու նուերներէն:

«Ուսման ծրագիրը, կ'ըսէ յօդուածագիրը, երկրին պէտքերուն յարմարեցուած է: Աստուածաշունչը կ'ուսումնասիրուի պատմական, վարդապետական եւ գործնական

տեսակետներով ամբողջ զպրոցական ընթացքին մէջ, նախակրթարանն սկսեալ մինչեւ վերջը: Ինը լեզու կ'ուսուցուի գոլէճին մէջ, նոյնպէս գիտութիւնները, իմաստասիրութիւն, քաղաքական անտեսութիւն, բարոյագիտութիւն ևայլն, ինչպէս մեր ամերիկեան հաստատութեանց մէջ: Գոլէճը իրեն որոշ շրջանակը ունի որուն մէջ նմանօրինակ ուրիշ հաստատութիւն չի գտնուիր, և ուսկից գրեթէ ոչ մէկ աշակերտ կրնայ ուրիշ զպրոց երթալ: Եթէ այս Գոլէճը իրենց պէտք եղած կրթութիւնը կարող չըլլայ տալ, սոցիալութեան մէջ պիտի մնան: Նմանօրինակ ուրիշ զպրոց մը երթալու համար, տասը օրուան ճամբորդութիւն մը ընելու է:

«Աշակերտները մեծ մասամբ Հայեր են, որոնք «Արևելքի Անկլո-Սաքսոններն» են: Հայերը երկրին այս մասին սեղանաւորները, վաճառականները, արհեստաւորները, երկրագործներն են, և ընդամենն ճարտարութեան մասին աշխարհիս ոչ մէկ ազգէն վար կը մնան: Երբ կըրթուին՝ աչքի զարնող տեղ մը կը գրանեն ընդհողմ, և իրենց ցեղին բարձրացմանը ու բարեկարգմանը անձնուէ աշխատողներ կ'ըլլան:

«Ուսկից կ'անուրին աշակերտները: Գոլէճին շրջանակին մէջ, զիշերօթիկ շատ մը բարձրագոյն վարժարաններ կան, և ալ աւելի շատ հասարակ զպրոցներ, միսիոնարներուն վերին հսկողութեան տակ, իբր 8000 և աւելի աշակերտներով: Բայց ասոնցմէ զուրս, 8000 — եթէ ոչ աւելի — աշակերտ ալ ոչ-բողոքական վարժարանները կը յաճախեն, որոնք միսիոնարներուն աւետարանական դործին առաջ բերած նախանձայուզութեան շնորհիւ հիմնուած են: Այս վարժարաններէն շատերուն ուսուցիչները Գոլէճէն ելած են, և ատոնցմէ աշակերտներ կուզան Գոլէճը: Բաժանման հին պատերը խորտակուելու վրայ են, և ուսուցիչներուն ջերմեանդ քրիստոնեայ ըլլալը արգելք մը չ'ըլլար որ կարևոր պաշտօններու կոչուին ոչ-բողոքական վարժարաններուն մէջ:»

Պատ. Ճէյմս Պարզըն, խօսելով Գոլէճին շրջանաւարտներուն կատարած գործին վրայ, ցոյց կուտայ թէ Գոլէճին մէջ ուսում առած ուսուցիչներ և քարոզիչներ պաշտօնի կը կոչուին ամբողջ Խարբերդի շրջանակին մէջ, ինչպէս նաև Պարսկաստան, Փոքր-Ասիա, Քիւրտիստան, և Կեղրոնական ու Արևմտեան Թիւրքիա: Նախագահ Կէյդը 1899 սեպտեմբեր 21 թուականով կը գրէ. «Կրցանք սովորականէն շատ աւելի թուով ուսուցիչ զրկել Խարբերդի շրջանակին մէջ ուրիշ քաղաքներու և գիւղերու: Երեք շրջանաւարտ և երեք զեք-շրջանաւարտ Տիարպէքի գացին ուսուցչութեան. անցեալ տարուան շրջանաւարտ մը ուսուցիչ է Մալաթիա, և ուրիշ մը՝ Մէզրէի գերման որբանոցը: Մեր աշակերտները ուսուցչութիւն կ'ընեն ամբողջ շրջանակին բողոքական և լուսաւորչական վարժարաններուն մէջ, ու տակաւին կարող չենք գոհացում տալ ամէն խնդրանքի: Լուսաւորչականները մենէ աւելի բարձր թոշակ կը վճարեն՝ մեր շրջանաւարտները ունենալու համար իբր ուսուցիչ:»

ՀԱՄԻՍԼԱՄՈ ԻԹԻԻՆ

ԵՒ

(2)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԲՐՈՒԲԱԿ ԱՆՏԱ

ԺԲ. զարէն ի վեր, այս պէս հինգ կրօնական միաբանութիւններ կազմուած են. Բատրիստները որոնք բոլորովին մարդասիրական վարդապետութիւններ ունին բարեպաշտութեան, զոհողութեան և գթութեան վրայ հիմնուած. Խեյրաթիանները՝ մտածողական ու հիացողական միաբանութիւն մը. Շատեհիանները՝ հոգեպաշտ. Նաքշպանիանները՝ ընտրողական, և Սաֆարաուարիանները՝ համաստուածեան: Այս կարգերը կամ միաբանութիւնները շատ մը երկրորդական ճիւղերու ստորաբաժնուած են, բայց իրենց վարդապետութիւնը միշտ օրինակուած է մայր-միաբանութիւններուն վրայէն: Այս ընկերակցութիւններու կ'անդամակցին ամէն դասակարգէ մարդիկ: Իրենց գումարումները կամ «հատրա»ները նպատակ ունին հաւատացեալները, «տիքր»ներով կամ բուռն մարզանքներու շնորհիւ, յափշտակման ու վերացման առաջնորդելու:

Ի նկատ առնելով այն սկզբունքը որ բոլոր այդ միաբանութիւնները կը վարէ և որ հիմնուած է կրաւորական հնազանդութեան վրայ գէպի Ելիսը կամ զլիսաւորը, կը հասկնաք թէ ինչ է այդ կարգի ընկերակցութեանց զօրութիւնը: Լաւագոյն կերպով զիմադրելու համար այն յարձակման զոր մեր գարուն եւրոպական քաղաքակրթութիւնը կը մղէ իսլամական երկիրներու դէմ, իրենց զոհները բացած են ամէնուն ու ամբողջացուցած իրենց ուսուցումը՝ քաղաքական պատուիրանքներ մտցնելով անոր մէջ, և ամենքը միացած են մէկ գաղափարի շուրջը, որ է կռիւ քրիստոնեաներու դէմ և սիսղէմական հակառակութիւն որ և է նորութեան դէմ: Այսօր իսլամական երկիրներու մէջ, ի զուր պիտի փնտռէք մարդ մը որ ընկերակցութեան մը անդամ չ'ըլլայ:

Ապտիլ Համիտ, այն ժամանակ երբ կայսերական գահէն շատ հեռու պարզ անհաս մըն էր, մտած է այդ ընկերութեանց մէջ՝ անդամակցելով Մատաւիաներու, որ Շատեհիաններէն ամենցուած ընկերակցութիւն մըն է: Իր անձնական կրօնաւորը, Տաֆէրն էր որ իրեն տուաւ «ուլթա»ը, այսինքն Մատաւիաներու ազօթքներուն ու ծէսերուն ծանօթութիւնը: Այս Տաֆէրը, Տրիպոլսեցի Մարապուլի և Պոլիս նոշախաներու առուտուրով զբաղող անձ մը, կրցաւ համոզել իր տէրը թէ Մահմուտներու և Ապտիլ Մէճիտներու քաղաքականութիւնը կը բռնէր հակառակ էր և օսմանեան կայսրութիւնը կը կործանէր: Գուշակեց անոր համար թէ հակառակ Ապտիլ Համիտի ու արքայական գահին միջեւ կանգնած արգելքներուն, ինքը պիտի ըլլայ սուլթան, սա միակ

պայմանով որ Մատանիներու կարգին մէջ մտնէ: Այդ գուշակութիւնը, որ զարմանալի դիպուածով մը իրագործուեցաւ, սկզբնապատճառը եղաւ այն բացարձակ վրաստահութեան զոր Տաֆէր կը ներշնչէ Ապտիւլ Համիտի:

Իր հոգեւոր առաջնորդին փափաքներուն պատասխանելու համար, Ապտիւլ Համիտ, Սուլթան եղածին պէս, Մարապութներու երրորդութեամբ մը ինքզինքը շրջապատեց, նախ Տաֆէրը, յետոյ անոր եղբորորդին Էսատը և Ապուլ Հուտա էֆէնտին: այս վերջինը, մեծ անողահւայ, աստղերը կը քննէր և իր փափաքներուն համեմատ կը փոփոխէր զօրապետներու ծրագիրները թիւրքական պատերազմին ժամանակ: Այն ազդեցութիւնը որ այս երեք տէրվիշները ունին Ապտիւլ Համիտի վրայ շատ անգամներ տեսնուած է: Անոնք են որ սուլթանին մտքին մէջ պահեցին այն պատրանքը թէ քիչ ատենէն բոլոր մահմետականները կողմի պիտի ելլան Եւրոպայի դէմ — պատրանք որ այնքան զօրաւոր կերպով օգնեց Արապի փաշայի ապստամբական յաջողութիւններուն: Էսատ, 1882ին, Գահիրէի մէջ, թուրքական արշաւանքին ժամանակ՝ Տաֆէր Տրիպոլիտոյ մէջ, համիտական շարժումին վարիշները եղան: Մարապութներու այս շրջանակին մէջ, Ապտիւլ Համիտ իւր լամական շարժումին գլուխը անցնելու առաջնորդուեցաւ, որուն գործօն զօրութիւններն էին կրօնական միաբանութիւնները: Անոնց ձեռքով է որ մութ ու թաքուն կերպով շարժել կուտայ իր հակաքրիստոնէական քաղաքականութեան երկու մեծ ուժերը որոնք կը կոչուին Մէքքէի ուխտագնացութիւն և զաղթականութիւն:

* * *

Մէքքէն, աշխարհի ամէն կողմերէն եկող հաւատացեալներու ժամադրաւայրը, զրեթէ բոլոր կրօնական ընկերակցութեանց կեդրոնը, «իսլամութեան սիրտ»ն է: Ապստամբական շարժումները որոնք յանկարծակիի բերին և դեռ կրնան բերել Եւրոպական պետութիւնները, առանց Մէքքէի գոյութեան երկիւղալի պիտի չըլլային: Սուլթանը այնչափ լաւ հասկցած է ասիկա որ իր իշխանութեան տակ եղած ամէն միջոցներով ջանացած է Հիճազի նահանգին բարեացակամութիւնը դէպի իրեն քաշել, ու անոր թշնամութեանը յաղթել առանձնաշնորհուաներ տալով այդ նահանգին, օրինակի համար սուրբերու շնորհուած, զրամական նպաստներ ու զանազան նուէրներ: Ասկէ զատ, իր ամբողջութեամբը պահած է մեծ շէրիֆութեան կարգը, որուն քարայական իշխանութիւնը շատ մեծ է:

Այդ բարձր պաշտօնին այժմու ներկայացուցիչն է Աուն-է-Ռաֆայի, Ռաֆայիաներու ընկերակցութիւնէն: Եւլաթ-Քէօշիի տիրոջը հաւատարիմ, հրաշալի կերպով կը ծառայէ անոր դիտաւորութեանցը: Այս մեծ շէրիֆը ուխտագնացութիւնը ըրաւ օսմանեան քաղաքականութեան ամենէն զօրաւոր օժանդակներէն մին: Ինք

հպտատեց — կամ լաւ եւս, ստակով ծախեց — ուխտաւորներու առաջնորդի համ «մութաուաֆ»ի հազարաւոր պաշտօններ: Այդ տիրադուր ունեցողները կ'երթան մահմետական երկիրներու զանազան մասերը և ուխտաւորներու խումբեր կը կազմակերպեն: Եթէ այդ ուխտաւորները Եւրոպական պետութիւններու հպտակ են, մութաուաֆները մեծ փոյթ կը տանին զանոք արդիւնք ուր հաւատաւոր մը հիւպատոսներու պաշտպանութեանը դիմելէ: Անոնց կը հաւատացնեն թէ հրեքէրիտոնէական միջամտութիւն կրնայ իրենց ուխտագնացութեան արձեքը ջնջել: Գիւլիին է հասկնալ մահմետական հպտակներ ունեցող Եւրոպական պետութիւններու համար այն վտանգը որ կրնայ առաջ գալ երբ քրիստոնեաներու դէմ պատուեր մը արուի Մէքքէն այդ հարիւր հազարաւոր մուսուլման ուխտաւորներուն: Օսմանեան կառավարութեան հոգը չէ թէ, ուխտագնացութեանց միջոցին, մահմետականներու անհուն խանութը կրնայ հանրային առողջութեան համար վտանգ մը ըլլալ: Երբ Եւրոպական իշխանութիւնները կ'արգիլեն ուխտագնացութիւնը, համիտական գործակալները ատոր մէջ առիթ մը կը գտնան իրենց կրօնակիցները համոզելու որպէս զի ազատին այն կառավարութիւններուն լուծէն, որոնք զիրենք կ'արգիլեն իրենց զլխաւոր կրօնական պարտականութիւնը կատարելէ:

Ալճերիայի, ինչպէս թուրքուպի մէջ, տասնեակ տարիներէ ի վեր հաստատ տեսնուեցաւ թէ զաղթականութեան մեծ հոսանք մը կայ, զրեթէ ամբողջովին դէպի Սուրիա ուղղուած: Այս հոսանքը կը քաշալերուի օսմանցի կամ թիւրքիա հաստատուած նախկին ալճերիացի գործակաւարներու ձեռքով, որոնք կը պարտին երկրին ամէն կողմերը՝ զաղթելու ստիպողական յորդորներ ընելով:

Մտիկ ըրէք Սուրիա բնակող մօքաբատէմի մը սա ազգաւանքը որ ալճերիացի բարեկամներու ուղղուած նամակի մը մէջ կը գտնուի: «Միացէ՛ք մեզի երկրի մը մէջ որ իսլամի սուլթանէն կը կառավարուի և իսլամական հող մըն է. եկէ՛ք ձեր մնացած օրերը ապրեցէ՛ք ազօթքով ու յարգանքով լեցուն հաւատացեալներու երկրի մը մէջ: Աստուած զաղթականներուն համար իր հատուցումը կը պահէ միւս աշխարհին մէջ, և...» Յետոյ նամակը փայլուն ու ուռուցիկ գովեստներ կը հիւսէ այն բարօրութեանց մասին որոնք հաւատացեալները կը վայելին ճշմարտապէս իսլամական երկրի մը մէջ: Բանանք մահմետական թերթ մը, Կ. Պօլսոյ «Մալիմաթ» թերթը, 1899 մարտ 8ի թիւը, Հոն պիտի կարգանք Ալճերիայի եւ ուրիշ երկիրներու մահմետականներուն ուղղուած կոչ մը, զիրենց յորդորող որ օսմանեան երկիրը գաղթեն ուր մահմետականները յարգուած են: անոնց իրաւունքները անբռնաբարելի ու կեանքը հանդարտ: Այդ գրութեան

մէջ, Կրիտէի զէպերուն վրայ խօսելով, ըստած է թէ այդ երկիրը բռնութեամբ յափշտակուած է ոչ—մահմե- տականներէ որոնք որ եւ է իրաւունք չեն յարգեր և ար- գարութեան մասին որ և է գաղափար չունին: «Այս զէպը մահմետականներուն այնչափ ծանր է որ մարդ- կային էակը չի կրնար հանդուրձել:» — Դամասկո- սի մէջ արար եւ քապիլ Ալճերիացիներու ճշմարիտ գալ- թականութիւն մը կայ, որ վերջերս աւելցաւ երկար ա- տենէ ի վեր Թունուզ հաստատուած մեր բնիկներու գա- լուատովը: Բնականաբար այս բնիկները մեր պաշտ- պանութեան չեն դիմեր, հապա իրենց Սուրիոյ կրօնա- կիցներուն կը ներկայանան իբրև զոհեր որոնք քրիստոն- եաներու իշխանութենէն փախած են: Սուլթանը անոնց հոգեր կը շնորհէ և զանոնք կը նկատէ իբրև օսմանեան հպատակ, որոնց վրայ անկարելի կ'ըլլայ ֆրանսական պաշտպանութիւնը գործածել նոյն իսկ երբ բացառաբար պահանջուի: Ատկէ առաջ կուգայ ո'չ միայն ապագային համար ճշմարիտ վտանգ մը, այլ նաեւ ծանր դժուարու- թիւններ մեր Սուրիոյ ներկայացուցիչներուն համար:

* * *

Համիլամական գաղափարին ի նպաստ հաւատատա- րածութիւնը կը կատարուի թէ՛ մասնաւոր առաքելութիւն- ներու գործունէութեամբ, որոնք աւելի քաղաքական են քան թէ կրօնական, եւ թէ՛ ազդեցիկ շէյխերու և մարապութներու զրկուած հրահանգներով: Այս շէյխերը կը ջանան Ապ- տիւլ Համիտը իբրև խալիֆա ճանչցնել նորադարձներուն: Սուլթանին նախորդները, մասնաւորաբար Ապտիւլ Ալիզ, նմանօրինակ առաքելութիւններ գործածած են կեղերնա- կան Ասիոյ մէջ, մինչև այն օրը ուր Անզլիա ստիպած է Պոլիսը այդ բանէն ետ կենալ, գոնէ առ երեսու: Իրօք, միշտ զոյութիւն ունեցած է: Ասոր փորձը կը անսնանք արեւելեան վերջին տազնապին զէպերուն ատեն Հնդկաս- տանի մէջ առաջ եկած իրարանցումէն: Այսօր շատ կը խօսուի Հնդկաստան սուլթանին վրայ, ուր մահմետա- կանը, որ ատենօք կառավարութեան ու գանձին տէրն էր, հիմակ տեղի տուած է Հնդկիին: Հնդկաստանի մահ- մետական հասարակութիւնը, կործանուածի կէտին հասած, զէպի կ. Պոլիս ուղղութիւն մը անսելու վրայ է: Ասի- կա շատ ճշմարտանման իրողութիւն մըն է, մանաւանդ երբ նկատի առնենք որ հնդիկ մահմետականներու հա- րիւրին իննուսունը հինգը Սիւննիներէ կը բազկանան և թիւրքերուն պէս հանաֆիներու (1) ծէսին կը հետեւին:

(1) Սիւննիները սրոնք մահմետականութեան զըլ- խաւոր ճիւղը կը կազմեն եւ 249 միլիոնի կը հասնին, Խուրանի և «Սուննայ»ի (աւանդութեանց) պատուիրանք- ներուն կը հետեւին: Չորս ծէս ունին, ամենքն ալ ուղղափառ համարուած, որոնց մէջ Ապու Հանիֆայի ծէսը ամէնէն ազատականն է:

Եզիպոսու ուր, այս վերջին տարիներս, զոհութեամբ տեսան խրտիվին Պոլիս ըրած յաճախակի այցելութիւն- ները, հասարակաց կարծիքը իր զէպի սուլթանը ու- նեցած համակրութիւնը չի ծածկեր: Հիւսիսային Ափրիկէի մէջ, Պոլսէն եկած առաքելներ կամ գործակատար- ներ կը պտըտին երկրին ամէն կողմը. երբեք օսմանեան բանակէն բարձրաստիճան անձ մըն է որ պատրուակով մը երկրին արեւելեան կողմերը կ'երթայ, կամ կրօնա- կան անձնաւորութիւն մըն որ կուգայ, ինչպէս վերջերս անսունեցաւ, «զիարա»ներ կամ հանդանակութիւններ ընելու Ալճերիայի ու Թունուզի մէջ, ի վնաս ժողովրդին ու նաև ի վնաս տուրքերու կանոնաւոր հաւաքման: Նոյնիսկ Մարոքի մէջ Ապտիւլ Համիտ կը ջանայ իր ազդեցութիւնը մտցնել: Շատ ատեն չէ որ Թանճերի մէջ օսմանեան դեսպանութիւն մը հաստատելու զրոյցը շրջեցաւ: Դրժ- բախտաբար յայտնի է որ Մարոքի թաղաւորը կը պնդէ թէ ինք աւելի հին ու բարձրագոյն իրաւունքներ ունի խալիֆայութեան քան Օսմանի յաջորդները: Ու այդ պես- պանութեան ծրագիրը, Ապտիւլ Համիտը շրջապատող տէրվիչներու ժողովին մէջ մտածուած, հետեւանք չու- նեցաւ:

Բայց այս կրօնական դիւանագիտութեան դրութիւնը մանաւանդ կը յայտնուի այն յարաբերութեանց մէջ զորս Ապտիւլ Համիտ ունի Սընուսիաներու միաբանութեան հետ: Տարբ տարի մը կայ սուլթանը Մէքքէի մէջ վանք մը շինելու արտօնութիւնը տուաւ Սընուսիաներուն, ու- րոնք Քատրիաներէն ածանցուած ճիւղ մըն են ու Հիճ- րէթի 1250 թուականին (1835) հիմնուած ալճերիացի Սիտի Մոհամմէտ պէն Ալի էս Սընուսիի ձեռքով: Աւան- դութիւնը կ'ըսէ որ Մահտին էլիսա Մեսիան, որ Յիսուսի օգնութեամբ Նեոք շնչելէ ետքը, աշխարհս պիտի վեր- ջացնէ, Սընուսիաներու մէջէն երևան պիտի գայ: Այս աւանդալէպը մահմետական աշխարհին մէջ, մանաւանդ Տրիպոլիս, ուր կը գտնուին իրենց զխաւոր Չաուիրա- ները, մեծ ազդեցութիւն մը կուտայ իրենց: Ասոր հա- մար թիւրքերն ալ, հակառակ իրենց միջիւ եղած հեռու- րութեան, կը ջանան լաւ յարաբերութիւններ մշակել ա- նոնց պետին, Շէյխ էլ Մահտիի հետ, որ այս վերջին տարիներս իր միաբանութեան կեղերնը Ճաղպուտէն (Տրիպոլիս) Քէպպոյի ովասիսին մէջ՝ Չաուաթ էլ իս- թաթ փոխադրեց: Թիւրքերը և Սընուսիաները փոխադար- ձաբար գործակալներ կը զրկեն իրարու սրունք ճշմարիտ իշխանական գեսպաններու պէս կ'ընդունուին:

Երկար ատեն, պ. Տիւվէրիէի հաւաստումներուն վը- րայ, որ առաջին անգամ ուսումնասիրեց այդ միաբա- նութիւնը, Սընուսիաները նկատուեցան իբրև զխաւոր արգելքը Ափրիկէի մէջ եւրոպական միջամտութեան: Մինչև իսկ Ճաղպուտի մայր—կեղերնը կոչեցին «մահ- մետական Հոսում»ը, թնդանօթներով պահպանուած ու հազարաւոր սեւամորթներով զինուած: Ժամանակը ցոյց տուաւ որ այդ վախը գոնէ չափազանցուած էր: Սիտի Մոհամմէտ պէն Ալի էս Սընուսի, որ 1835ին շինել

տուաւ Ճաղպուտի հոշակաւոր վանքը, մեծ առաքելաւոր եղած էր միայն: Իր կամքին զօրութեամբը և խաղաղօրէն, առանց արինահեղութեան, անապատին մէջ հիմնած էր ընդարձակ կրօնական կայսրութիւն մը: Իր քարոզութիւնները՝ բրիտանացիներու նկատմամբ՝ աւելի կամ նուազ թշնամական չէին քան միւս միաբանութեանց պետերուն քարոզութիւնները: Ասոր ապացոյցը այն է որ իր հետեւորդները յաճախ տուին չափաւորութեան օրինակներ, որոնք իրենց մոլեռանդութեան մասին տիրած կարծիքը կ'ուղղէին: Հազիւ երկու տարի կայ, Կ. Պոլսոյ մեծ վարչութիւններուն մէկուն ծառայութեան մէջ գտնուող բրիտանացի մը Տրիպոլիսի մէջ կը ճամբորդէր և բազմաթիւ Սընուսիական Զատուհաններու մէջ խիստ հիւրընկալ ընդունելութիւն մը կը գտնէր: Իրեն կաթ, հակիթ կայլն կը հրամայէին և մօքատտէմները ձիուն ասպանդակը կը բռնէին զինքը վրան հեծցնելու համար, թէև լաւ գիտէին թէ այդ անձը իրենց հակառակորդ կրօնքէն էր:

Անշուշտ Սընուսիաները յանցաւոր են անապատին մէջ Եւրոպացիներուն վրայ զործած իրենց ոճիրներովը, բայց ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր, իրենց բո՛ւն զործն է հաւատարմութիւնը, և եթէ այս մասին ուրիշ միաբանութիւններէ աւելի կը յաջողին, պատճառը այն է որ լաւագոյն դիրքի մէջ կը գտնուին: Քաղաքակրթութենէ իրենց բացարձակ մեկուսացումը, Մէքքէի հետ իրենց յարաբերութիւնները, հիմնադրին մեծ հռչակը ու նաև իրենց քարոզութեանց միջավայրը, յաջողութեան հզօր աւարներ են: Անուրանալի է թէ իրենց զործը թանկագին օժանդակութիւն մըն է համիլամութեան ներկայացուցած քաղաքական գաղափարին համար:

Ուրիշ մահմետական առաքելութիւններ, սուլթանին օգնութեամբը կամ առանց անոր, նոյնպէս հաւատարմութիւններ կ'ընեն: Գործելով ծայրագոյն Ասիայի, Հնդկաստանի, Չինաստանի կամ Աւստրալիայի մէջ, հոգիներու աշխարհակալութեամբ իսլամութեան կը միացնեն ուժեր որոնց կարեւորութիւնը պէտք է ամէն մասով ուշադրութիւն գրաւէ: Ասոր ապացոյցը այն թիւերուն մէջն է զոր աշխարհի զանազան մասերու մէջ վերջին տարիներս իսլամութեան սարածման մասին խօսող տետրակ մը ցոյց կուտայ:

* * *

Յաճախ իսլամութիւնը կը համարին սուրի կրօնք մը, որ «Շիհատ»ը կամ սուրբ պատերազմը իր զլխաւոր վարդապետութեանց մէջ կը դասէ: Իսլամութեան ծագումն ու արագ տարածումը կարծես այդ կարծիքը կ'արդարացնէ: Յիրաւի, իսլամութեան նախնական պատմութիւնը յաղթանակն է կրօնքի մը որ, ուժի շնորհիւ, մէկ դարու մէջ հիմնեց կայսրութիւն մը որ ինդոսէն մինչև Ատլանտեան ովկիանոս կը տարածուէր: Այսուհանդերձ, իսլամութեան այդ առաջին զրուլթիւնը, ինչպէս

խալիֆայութիւնը զարծադրեց, սահմանուած չէր խալիֆայութենէն ետքը տեսելու: Երբոր հսկայ պետութիւնը կործանեցաւ՝ անխուսափելի ապակեզրոնացման մը պատճառաւ, մեծ միութեան բաժանումը իսլամութեան սկզբնական յղացման մասին հետզհետէ տկարացում մը յառաջ բերաւ: Իսլամական պետութիւնները, իրենց յաջող կոնիւնթէն զրկուած, տիրած երկիրներուն մէջ կազմակերպուելու և զանազան օտար ցեղերը իւրացնելու անկարող, դէպի կործանում դիմեցին: Սուրով քարոզութիւնը դադրեցաւ: Բայց իսլամական կրօնային գաղափարին ուժերը տեսցին:

Իսլամութեան քաղաքական զօրութիւնը նահանջեց. իր կրօնական զօրութիւնը չդադրեցաւ առաջ երթալէ: Առանց սուրի, ամէն օր նոր հետեւորդներ կը գտնէ: Երբոր Մարգարէն 632 յունիսին աչքերը զոցեց Մէտինէի մէջ, իր կուսակցութիւնը փոքրաթիւ հաւատացեալներէ կազմուած էր որոնք ութ հազար հոգի-նոց բանակ մը միայն կրնային մէջտեղ հանել: Այսօր աշխարհի երեսը կայ երկու հարիւր վաթսուս միլիոն մահմետական, որոնք աշխարհի բնակիչներուն հարիւրին տասնըհինգը կը ներկայացնեն:

Եւրոպական թիւրքիան երկու երեք միլիոն մահմետական միայն կը պարունակէ: Թէև հոս իսլամութիւնը, իբր պետական կրօնք, ամէնէն աւելի առանձնաշնորհեալ դիրքը կը գրաւէ, բայց իսլամները փոքրամասնութիւն կը կազմեն: Նոյնիսկ, բացառաբար, այստեղ իրենց թուին մէջ նուազում մը կը տեսնուի: Այս նահանջումը կը բացատրուի թէ՛ թիւրքիոյ յատուկ ընդերական զանազան պայմաններով և թէ՛ Արեւելեան բրիտանացի եկեղեցիին դիրքովը, որ իսլամութեան դէմ պայքարով զօրացած, հաւատարմութեան համար նպաստաւոր հող մը չի ներկայացներ: Քանզի փորձով տեսնուած իրողութիւն մըն է որ իսլամական բրոքականտան իր զործունէութեան բո՛ւն զաշտը կը գտնայ այն ժողովուրդներուն քով որոնք իսլամութեան հետ քաղաքակրթութեան առաջին տարր մը կ'ընդունին, կամ թէ այն ժողովուրդներուն քով որոնք, իսլամութեան ուսուցիչութեան ձգտումներուն շնորհիւ, կրօնական շատ ծանր լուծէ մը ազատելու միջոցը կ'ունենան:

Եւրոպական Ռուսիան ինը միլիոն մահմետական ունի: Ճշմարիտը ըսելու համար մահմետականութիւնը Ռուսիոյ մէջ նախամեծար դիրք մը կը վայելէ եթէ զայն բաղադրեանք ոչ-օրթոտոքս բրիտանացի եկեղեցիներուն և հրէական կրօնքին հետ: Այսուհանդերձ, առժամայ հալածանքներ տեղի ունեցած են ատեն ատեն: Բայց ատիկա ուրիշ արդիւնք չէ ունեցած եթէ ոչ հալածեալներու կրօնական խանդը հրահրել և զիրենք մարտիրոսի պատուոյն բարձրացնել: Ինչպէս Խազանի իսլամը, Օքայի եւ Վոլկայի թաթար մահմետականը, նոյնպէս մեծ եւ փոքր Ռուսիոյ մէջ հաստատուած մահմետականը իր կրօնքը ծայրայեղ զօրութեամբ կը պաշտպանէ: Ուրիշ կէտերու մէջ իսլամական բրոքականտան օրթոտոքս

քարոզութեան կը յաղթէ: Քրիստոսը, Չուլաշները, վոլկայի ֆինլանտական ցեղերը, ու անոնց հետ սղերներու շատ մը թափառաշրջիկ ցեղեր մասնաւոր հակում մը ունին մահմետականութեան որ կամաց կամաց, բայց յաջողութեամբ, առաջ կը դիմէ զէպի Արեւելք: Իսլամ կրօնաւորները երևան կուզան ամէն տեղ գործօն և ուսեալ, նոյնիսկ ոռու բոքերէն շատ բարձր են իրենց պատկանանքովը և կրօնական կրթութեամբը: Դպրոցները եւ մզկիթները կը մատակարարուին վաքֆներով: Մահմետականներու աւանդութեան համեմատ, գատաւորի և ուսուցիչի պաշտօնները կը վարեն մուլանները: Պաշտօնական բարձր կղերը միայն պետութեան հսկողութեան տակ կը գտնուի, այսինքն՝ Շէյխու իւ իսլամը որ Օրէնսդրել կը կենայ, և Կովկասի Շիիդներու միւթթին որ Խրիմ հաստատուած է: Այսպէս, կրօնքի ներքին գործերուն մէջ, Ռուսիայ իսլամները տեսակ մը ազատութիւն կը վայելեն. բայց կառավարութիւնը իրատութեամբ կը վարուի ամէն կրօնական միաբանութիւններու և ընկերակցութիւններու հետ: Այսուհանդերձ Գատորիաները, Շատկիաները և պարսկական ու հնդկական ծագում ունեցող ուրիշ ընկերակցութիւններ կըրցած են զաղտնի համախոհներ ունենալ ոռուական երկրին մէջ: Որոշ տեղեկութիւններ կը պահսին մեզի, այժմու իսլամական շարժումին մէջ իրենց զերը զիտնալու համար: Բայց իրենց գոյութիւնը, այդքան զժուար պայմաններու մէջ, բաւական է ցոյց տալու համար մահմետական ընկերակցութիւններու կենսական ներքին ուժը: Իրենց ամեն շատ համախոհները Կովկասի մէջն են: Ու միայն զիպուածին չենք կրնար ընծայել մահմետական Չէչէններու ապստամբութիւնը, որուն այդ նահանգը թատերալայր եղաւ 1886ին:

Նոյն ընկերակցութիւնները կը գտնուին բոլոր Ասիական Ռուսիա, Անդրկասպեան երկիրներու, Քրիկըզեան սթըններու և հարաւային Սիպերիոյ մէջ: Նաքչէպէտիաներու միաբանութիւնը, որուն հիմնարկութիւնը մանկուկան արշաւանքին ժամանակ եղած է, ամէնէն աւելի համախոհներ ունի իր զլուաւոր կեդրոնն է Պուխարա, ուր 1339ին ծնած է միաբանութեան հիմնադիրը, Մուհամմէտ Պէհաէտտին-է-Նաքչէպէտի, զոր իսլամութիւնը կը պատուէ իբրի իր ամէնէն նշանաւոր շէյխերէն մէկը: Այս միաբանութիւնը, կեդրոնական Ասիոյ մէջ, ծայրայեղօրէն յետադիմական միստիքականութիւն մը կը տարածէ և կ'աշխատի այդ երկիրներուն մէջ իսլամական վերածնութիւն մը առաջ բերել: Ռուսիոյ Եղովն թիւրքիստանի ու Պուխարայի զբաւումն առաջ, Պուխարա միստիքական մոլեռանդութեան վառարան մըն էր: Արեւելադէս Վամպերի մէկ ճամբորդութեան միջոցին, ցնորատես «խուան» յներ ամենապայծառակ տեսարաններու տեղի կուտային: Էմիրը, տէրվիչի պէս հագուած, զլուխը բիւլահ մը անցուցած, փողոցները կը պտըտէր հսկելու համար իրենց կրօնական ամենախիստ պատուիրաններու անթերի գործադրութեանը: Շարտան

զամ մտային բորբոքումը մայրաքաղաքէն տարածուած է գեղերուն մէջ ու մոլեռանդ ցեղեր յարձակած են պարսկական սահմանազլխին վրայ: Ռուսական տիրապետութեան հաստատումը այս երկիրները հանգարտեցուցած է, զոնէ առ երեւոյթս: Մինչեւ հիմա, անանկ կ'երևայ որ Ռուսիոյ իսլամները համակերպութեամբ ընդունած են իրենց ներկայ վիճակը. ապագան միայն ցոյց պիտի տայ թէ ասիկա ո՞ր աստիճան ստոյգ է: Սպասենք այն անխուսափելի օրուան ուր Ռուսիա եւ Անգլիա, զէն ի ձեռին, իրարու զէմ պիտի ելլեն խայպէր կիրճին վրայ: Ի՞նչ պիտի ըլլայ այն ատեն իսլամական մոլեռանդութեան զերը: Երկու պետութիւններէն ո՞րը պիտի կրնայ զայն իր կողմը ունենալ: Ոչ ոք կրնայ նախատեսել ասիկա:

Պուխարայէն ետքը, Սմըրզանտ, Մէրվ, Խելա, Թաքէնտ և Հէրաթ այն քաղաքներն են ուր Նաքչէպէտիաները բազմաթիւ համախոհներ ունին: Չինական Թիւրքիստանը, Խոքանտը, Աֆղանիստանը, Պարսկաստանը, Պելուճիստանը եւ Հնդկաստանը նոյնպէս այդ միաբանութեան ազդեցութեան տակն են: Իր սրբավայրները ամէն կողմ անվիճելի ժողովրդականութիւն մը կը վայելեն. ամէն զի Նաքչէպէտիան կը նկատուի իբր աշխարհի «հոգեւոր պետ»ը, որուն ամէնէն հրաշալի շնորհքները տրուած են Աստուծմէ: Նաքչէպէտիաներու պատուաւորութեան համբաւը, իրենց վարդապետութեան առաձգութիւնը, որ մինչեւ իսկ տեսակ մը հոգեփոխութիւն կ'ընդունի, այդ միաբանութեան տուած են անվիճելի ազդեցութիւն մը մահմետական ժողովուրդներու մտքին վրայ, որ Մայրագոյն Արեւելքէն մինչեւ Թիւրքիա կը տարածուի: Ուրեմն պէտք չէ զարմանալ եթէ համախառնական գաղափարը ծնած է Պուխարայի մէջ, այդ նշանաւոր միստիքական օրորոցը, որ գործօն զեր մը իսղացած է միշտ կեդրոնական Ասիան յուզող ցեղային ու կրօնական կոփներուն մէջ:

ՏՐԱՌՆ ԵՒ ՏՆԷՔԱՐԴ

(Շարունակելի)

ԱՆՑԵԱԼԻ ԴԷՄՔԵՐ

Ա.

Թիւրքիոյ Հայոց համար շատ աննպաստ ատենի մը պատահեցաւ 1877ի Արեւելեան պատերազմը: Ազատագրութեան գաղափարը այն ինչ կը տեղաւորուէր հայ մտքին մէջ: Թէ՛ Հայաստան, թէ՛ Պոլիս Հայ ժողովուրդը իր վիճակին ապագայ բարօրութեան խորհուրդները կը յղանար եւ անոնց գործադրութեան նախնա

կան պատրաստութիւնները կը տեսնէր: Չինք կրնար որոշապէս վճռել թէ 1878ի պատերազմին յետաձգումը ինչ ազդեցութիւն պիտի կրնար ունենալ մեր ազգային կեանքին վրայ. սակայն եթէ ուսեթիւրք պատերազմը քարորդ դար մը ետքը ծագէր, հաւանական է որ քաղաքական հանգամանքներէն օգտուելու համար անցեալին պէս բուլղովին անպատրաստ պիտի չգտնուէինք: Մեր շահերուն տեսակետովը, այդ պայթումը վաղաժաման էր 1877ին, ու իր հետեանքները յանկարծական փոփոխութիւն մտցուցին մեր գաղափարներուն ուղղութեանը մէջ: Ռուսեթիւրք պատերազմին վերջնապուն առթիւ ստորագրուած խաղաղութեան դաշնագրիներուն Հայոց նպատար տրամադրութիւնները մեզի յուսադրեցին թէ մէկ ոստումով կարելի է կտրել անցնիլ ստրկութիւնը ու ազատութիւնը իրարմէ անջատող մեծատարած անշըրպետը: Մինչեւ այն ատեն մենք կասկածոտ, երկիւղալի խորխափումներով կ'ընթանայինք դէպի ազատագրութիւն. բայց մեր միտքը մէկէն ի մէկ շլացաւ Սան-Սթեֆանոյէն ու Պերլինէն: Յեղաշրջումի քաղաքականութիւնը մեր ազատագրութեան դատին համար աւելի նպատակայարմար կարծեցինք քան թէ բնաշրջումի օրէնքը: Ժողովուրդը մը իր մտքին ուղղութեան ինքնիշխան տէրը չէ միշտ, պարագաներն են որ շատ անգամ կը վճռեն ազգի մը ճակատագիրը: Մեր ժամանակակից պատմութիւնը գրողները օր մը անշուշտ հանդարտած մտքով պիտի ուսումնասիրեն 1878էն յետոյ Հայ ազգին հոգեբանական կացութիւնը, եւ հոն պիտի գտնեն մինչև մեր օրերը կատարուած դէպքերուն նախապատճառները:

Ռուսեթիւրքութեան բազմառատ նիւթ հայթայթող էջ մըն է մեր պատմութեան 1850էն մինչեւ 78ի ժամանակամիջոցն ալ: Մտաւորական նոր շարժումի մը սկզբնաւորութեան թուականն է 19րդ. դարու երրորդ քառորդը: Այդ շարժումը աղատութեան ապագայ շարժումին յառաջաբանն է: Անշուշտ օր մը իմաստասեր մտքով պիտի քննուի մեր պատմութեան այդ 1850-78ի շրջանը, որուն մէջ պայծառափայլ կը պատկերանան բազմաթիւ անուններ: Ասոնց մէջ Նիկողոս Պալեան, Յակոբ Պալեան, Նահապետ Ռուսինեան, Գրիգոր Օտեան կը ներկայացնեն գրականութեան, գեղարուեստի, իմաստասիրութեան գաշնակցութիւնը, հայ ազգը դէպի ազատութեան առաջնորդելու նպատակաւ:

Պալեան Սարգիս պէյին մահը ինծի յանկարծ կը յիշեցնէ այդ չորս դէմքերը, որոնց մէկը, Նիկողոս Պալեան, երբեք չեմ ճանչցած, և միւս երեքը ընդնշմարած եմ: Այդ աներևութացեալները խանդավառ սիրոյ, երկիւղած յարգանքի մը յիշատակը թողած են իրենց յաջորդող սերունդին սրտերուն ու մտքերուն մէջ:

Պալեանները թիւրքիոյ Հայոց քն ժողովրդական ընտանիքներէն մէկը եղած են: Հարստութիւննին ժողովրդին արինումն ու արցունքովը չէր ոռոգուած: Արքունի ճարտարապետութիւնը իրենց ընտանեկան ժառանգութիւնն էր, այդ մենաշնորհէն կ'օգտուէին զարգացնելու և

հարստացնելու համար իրենց ազգակիցները: Հարիւրաւոր հայաստանցի հայ բանուորներ արքունական ու կառավարական շէնքերուն կառուցմանը կ'աշխատէին. ո՛չ ճարտարապետ ամիրան, ո՛չ իր զաւակները զրկանք մը կ'ընէին գործաւորին: Կարապետ ամիրան, կամ ինչպէս կ'ըսէին խալֆա ամիրան, շատ կրօնասէր հայ մըն էր, իր ազգին բարիքը ցանկացող, ու սուլթան Մէճիտին սիրելին ըլլալով կ'օգտուէր իր դիրքէն ու հայ ժողովրդին միշտ ծառայութիւններ կը մատուցանէր: Դեռ երեսուն քառասուն տարի առաջ, մինչեւ Համիտի գահակալութիւնը, սուլթաններուն վարմունքը իրենց ծառայող Հայոց հետ քիչ թէ շատ կը յիշեցնէ հին արևելեան վէպերը: Սուլթան Մէճիտին Պալեաններուն հետ ըրած կատակներէն մէկը պատմելով կրնամ գաղափար մը տալ ատենին արքայական բարքերուն վրայ:

Սուլթան Մէճիտ օր մը կը կանչէ Նիկողոս Պալեանը, ու իր դէմը աթոռի մը վրայ նստեցնելով ձեռքը չպուս մը կուտայ որ ծխէ: Նոյն միջոցին հրաման կը զրկէ Կարապետ ամիրային իր բոլը գալ: Ճարտարապետը սուլթանին սենեակը մտնելուն երբ իր զաւակը այդ անհարկի զիրքին մէջ կը տեսնէ, կը հասկնայ թէ սուլթանը զինքը յանկարծակի բերելով զբոսնուլ կ'ուզէ: Հաճոյակատար դերասանութեամբ, առանց բոպէ մը վարանելու, կ'ալլալի, կը շփոթի, կը խոռի, ու զողզալով «Ծօ՛ Նիկողոս, ծօ՛ Նիկողոս, կը թոթովէ հայերէն, ծօ՛ ատ ինչ խալթ է կ'ընես. ծօ՛ տղայ, խեղճդ եկեր է. ինչ փորձանք պիտի բերես զլինուս:» Ու սուլթանը ահագնաքրքիջ խնդումով կը զբոսնու: Արքայական զբօսանք մը որ Համիտին Հայոց զուխներուն հետ ըրած զբօսանքէն քիչ մը աւելի ախորժելի է:

Նիկողոս Պալեան շատ երիտասարդ մեռաւ, դեռ երեսունը չմտած: Իր ժամանակակիցները կը հաւատեն թէ գեղարուեստի համար արտակարգ ձիրքերով օժտուած էր, ու ճարտարապետութեան մէջ մեծ տաղանդ մը ըլլալու վիճակուած: Հայրը, Կարապետ ամիրան, ջերմ պահպանողական մըն էր, իսկ զաւակը յանդուգն վերանորոգիչ մը ըլլալ ուզեց: Ազգային Սահմանադրութեան մը գաղափարը առաջին յղացողն է եղած: Իր խորհուրդներուն իրականացումը տեսնելու ժամանակ չունեցաւ, 1858ին վախճանելով: Իր մտերիներն ու խորհրդակիցները՝ Ռուսինեան եւ Օտեան, աւելի ապրեցան, ու Սահմանադրութիւնը հիմնադրողներէն եղան: Օտեան նախ Մեղրնի մէջ, ու ետքէն ալ առանձին տետրակով, հրատարակեց իր վաղամեռ բարեկամին կենսագրութիւնը: Ռուսինեան 1870ին, Ս. Նիկողոսի նախատօնակին ուրբաթ իրիկունը, Ազգային ժողովին մէջ գերազանցօրէն սրտայոյզ ատենախօսութեամբ մը Նիկողոս Պալեանի անունը ամէն մտքերու մէջ արթնցուց, ժողովին յիշեցրնելով թէ իր գոյութիւնը անոր մտքին պարտական է:

Յակոբ պէյ Պալեան, գրականութեան ու գեղարուեստի սիրովը խանդավառ, հանրային գործունեայ կեանքի մը անյարմար կը զգար ինքզինքը, ու ամէն անգամ որ

երեսփոխան կ'ընտրուէր, հրաժարականն ալ կուտար: Իր ազգին կը ծառայէր իր չորս կողմը բարիք սփռելով, ընտանիքներ երջանիկ ընելով, ու զեղարուեստի նուիրուած Հայերը քաջալերելով:

Ապտիւ Ազիզի սուլթանութեանը թիւրքիա Եւրոպայէն մեծագումար փոխառութիւններ կ'ընէր: Սուլթանը որ արուեստասէր մըն էր, ու կծծի մէկն ալ չէր, այդ ըստակներէն մաս մըն ալ կը յատկացնէր պալատներու, շէնքերու կառուցման: Միլիոնով ոսկի անսահման վստահութեամբ Պալեաններու տրամադրութեան ներքե գրուած էր: Ապտիւ-Ազիզ արեւելեան վեհապետի մը արժանապատուութեան զգացումը ունէր. Սարգիս պէյ Պայեան երբ սուլթանին կը ներկայացնէր շինութեանց հաշուետեւ արձրները, սուլթանը, առանց ակնարկ մը իսկ տայու թուանշանի սինակներուն, գումարէն կը նայէր միայն, ու վճարումի հրամանը կուտար: Պալեանները սուլթանին վստահութիւնը չարաչար չգործածեցին: Սարգիս պէյ որ հիմակ կը մեռնի, հարստութիւն մը չի թողուր, ու իր տարագրութեան երկար տարիները Եւրոպա նեղութեամբ ապրեցաւ: Յակոբ պէյ մանաւանդ բան մը չթողուց, ու Նիկողոս պէյի զաւակները նախանձելի վիճակի մէջ չեն: Պալեան եղբայրները անձնապէս չափաւոր սահմանով ազդուեցան իրենց մենաշնորհեալ պաշտօնէն: Իսկ իրենց ձեռքին տակ գտնուող ճարտարապետները, պաշտօնեաները, վաճառականները, ամենքն ալ մեծապէս օգտուեցան. անոնցմէ ոմանք մեծկակ հարստութիւն իսկ զիջեցին:

Շինութեանց նիւթական մասերուն հսկողութիւնը ստանձնած էր Սարգիս պէյ որ քաջ ճարտարաշէտ մըն էր, իսկ յատակագծերու պատրաստութիւնը, գեղարուեստական մասը Յակոբ պէյին կը պատկանէր: Ազնիւ, տաղանգաւոր մարդ, Յակոբ պէյ կը ջանար իր շուրջը զըտնուող բոլոր հայերը քաջալերել, յառաջացնել, ու իր քաջալերանքը կը շոյալէր աւելն հայ գծագրիչներու, ճարտարապետներու որոնք մասնաւոր ընդունակութիւն ցոյց կուտային:

Յակոբ պէյ փրանսական կըթութիւն ստացած էր. իր բնատուր ձիրքերուն պարգացումը կը պարտէր փրանսայի զոր խանդակաթ սիրով կը սիրէր: Վշտի ու սուգի օր մը եղաւ իրեն համար, ինչպէս ամենուս համար ալ, 1870 սեպտեմբեր 2 թուականը, այն չարաշուք օրը որ Ֆրանսա պարտուեցաւ Բրուսիայէն, ու իր վեհապետը գերի տարուեցաւ Գերմանիա: Այդ գուժերը իմանալուն, Յակոբ պէյ իր պաշտօնատան մէջ լաց կը գնէ ու կուշայ անմիտութեամբ կսկիծով: Եւրջը գտնուողները, նմանօրինակ թախճութեամբ համակուած, չեն համարձակիր սփոփանքի բառ մը գտնել: Հայաստանցի ճարտարապետ մը, ալ չզիմանալով իր սիրած պետին զգացած ցաւերուն, անոր կը յառաջանայ, ու տխրաձայն շեշտով մը՝ «Պէյ, Պէյ, կը գոչէ, յիշէ որ Լեւոնն ալ Եղիպտոս գերի տարուեցաւ, յիշէ՛ որ Անին ալ աւերակ է, յիշէ՛ որ Հայաստան փրանսայէն աւելի դժբաղդ է:»

Յակոբ պէյ քիչ մը կը յիշեցնէր այն խալաքի եւ գերման պզտիկ իշխանները որոնք իրենց շուրջը մտաւորականներու արքունիք մը կազմած, գրականութեան ու գեղարուեստին բարեկամները եւ պաշտպաններն էին: Յակոբ պէյի Օրթագեղի ծովեզրեայ բնակարանը Պոլսոյ հայ գրագէտներուն ու արուեստագէտներուն համար տեսակ մը ահագեմիա էր: Ռուսինեան, Երեմեյ, Թերզեան, Թալեան, Աղամեան եւ ուրիշներ միշտ կը գըտնուէին այդ Ակագեմիան որ լեզուագէտները հայ բառերը կը բնութիւն, կը վերակինգանացնէին, կամ նորեր կը ստեղծագործէին, ուր պատմաբանները ամենալուրջ ու սուրճասիրութիւններ կը կատարէին, և բանաստեղծները խանդավառ հոգով կ'երգէին: Յակոբ պէյի սիրած բանաստեղծը Թովմաս Թերզեանն էր, Արշակ Բ օրերային քերթուածին հեղինակը, Անակրէոնի, Կէօթէի թարգմանիչը: Հիմա Թերզեանի վրայ չի խօսուիր. բանաստեղծը կեանքի բեռներուն տակ ճնշուեցաւ, գործի մարդ եղաւ: Ու կը ցաւինք որ իր բանաստեղծութեանց ամբողջ մէկ հասաքածուն չէ հրատարակուած որպէս զի մեր հիմակուսն մտածութեամբը կարենայինք ճշգրիտ հայ մատենագրութեան մէջ Թերզեանին որոշ գերը: Բայց որքան որ կրնամ յիշել Թերզեանի ոտանաւորները, անոնք զմայլելի փափկութեան մը հրապոյրն ունէին, ու քաղցրալուր շեշտով մը կը հրճուեցնէին մեզի: Թերզեան եւ թատերգակ բանաստեղծ էր. բայց կարծեմ թէ, գոնէ այդպէս կ'ըսէին քսանըհինգ երեսուն տարի առաջ, Շէքսպիրի ու Շիլլէրի հետեղութեամբ հայ զիւցազներ ստեղծեց:

Իր ակապեմիայէն ոչ շատ հեռու, Հայոց եկեղեցիին ու գարոցին շրջափակին մէջ, Յակոբ պէյ պզտիկ թատրոն մը կառուց ու կահաւորեց այնքան սիրուն ու գեղեցիկ որ «ոսկի տուրիկ» կը կոչէինք, ու այդ շէնքը նուիրեց Բարեսէր ընկերութեան: Հայ թատրոնին հիմարկէքի պատմութեան մէջ Օրթագեղ առաջին տեղը կը գրաւէ, շնորհիւ Պէշիկթաշլեանի, եւ կաթուղի ու լուսաւորչական երիտասարդներու խանդավառ եռանդին: Իրենց թատրոնը զուտ ազգային հաստատութիւն մը եղած էր. տեսակ մը պատմական ու կրօնական վարժարան էր: Վահէ, Արշակ Բ, Կոնստանտին, ահա ինչ որ կը ներկայացընէին Օրթագեղի երիտասարդները որոնք աւելի ազգասէր էին քան արուեստագէտ, ու ասանց հետ երբեմն ալ կատակերգութիւններ, Տէշալիմօն կամ Բաթլին փաստաբանը: Գերասիմօնի սակայն գոյութիւն չունէր. թատրոնը եւ կեղեցական ու ընտանեկան կեանքին մէկ խառնուրդն էր: Թատերարեմը նախ՝ կաթուղի Հայոց Լուսաւորչեան վարժարանն էր, յետոյ լուսաւորչականներուն Ս. Թատրմանչաց եւ Ս. Հովիտիմեանց վարժարանները: Ներկայացումները ընդհանրապէս բարեկենդանի միջոցին տեղի կ'ունենային: Յակոբ պէյ պաշտպանելով Բարեսէր ընկերութիւնը ճշմարիտ թատրոնը հիմեց:

Բարեսէր ընկերութեան թատրոնին մէջ ազգային խաղերու հետ ներկայացուեցան նաև Մոլիէրը, Ֆելիքս Բիայի Լիոնի Սուրհանդակը, Հիւսօն ու Գամբիազարդ

տիկինը: Այդ թատրոնին մէջ փայլեցան տիկին Հրաչեայ
և Աղամեան:

Օր մը սակայն մեծ յօբաղղութիւն մը մահացուց
Պալեանի սիրտը.— իր կինը ծննդաբերութեան ատեն մե-
ռաւ զակին հետ մէկտեղ. ամուսինը ձգեց ամէն բան
ու մեկնեցաւ զնաց Բարիզ, իր ցաւերուն մէջ բիշ մը
սփոփուելու համար: Եւ շատ չանցած իր մահուան գու-
ժը հասաւ Պոլիս:

Ա. Ա.

ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԸ ԽՆԴԻՐ

Գահիրէի Երեսփոխանական ժողովը Ալեքսանդրիոյ
թաղական խորհրդին հետ համաձայնութեամբ բեկա-
ներ է Եղիպտոսի առաջնորդական ընտրութիւնը որ 1898ի
գարնան կատարուած էր այդ միևնոյն երկու մարմիննե-
րուն համախորհուրդ միարանութեամբը: Այս պատահարը
զուտ տեղական խնդրի մը սահմանափակ շրջանակին մէջ
չի պարփակուիր. ազգային ընդհանրական շահերուն հետ
սերտ առնչութիւն ունի:

Ընդհանուր Հայութիւնը սփոփանք զգաց երբ Գա-
հիրէի երեսփոխանութիւնը ամբողջ ազգին զգացումնե-
րուն թարգմանը հանդիսանալով որոշեց Կ. Պոլսոյ նա-
խորդ Պատրիարքը Երուսաղէմէն հանել և գործունեայ
կեանքի մը հրաւիրել: Հայ ժողովուրդը մեծ անարգա-
րութիւն մը գործած պիտի ըլլար, անկանգնելի ստոր-
նացման մը անհերքելի պագոյցը տուած պիտի ըլ-
լար եթէ հեռո՞ւն, մենաստանի մը խօրը մոռնար այն
եկեղեցականը որ Հայ ազգին մեծ յոյսերուն եւ մեծ
վիշտերուն օրերը ո՛չ շլացաւ, ո՛չ ստորնացաւ, ու բրիտ-
տոնէութեան նախնի դարերուն հայրապետի մը վե-
հութեամբն ու արիութեամբը Մեծ-Բանապետին ականջ-
ներուն հնչեցուց Արդարութեան, Օրէնքի, Իրաւունքի
բողոքները զոր անոր շուրջը ո՛չ ոք կը համարձակէր լսե-
ցընել իրեն:

Թիւրքիոյ Հայերը իրենց ազգային սահմանադրա-
կան իրաւունքներէն օգտուելու անկարելիութեան մէջ
կը գտնուին շնորհիւ այն ծայրայեղ եռանդին որով պատ-
րիարքարանը սուլթանին հաճոյակատար երկնալ կ'ըղձայ:
Գաւառական երեսփոխանութեանց ջուհիները Պատրիարք-
արանին հրամաններէն կախում ունին, սարսափի ու կո-
տորածի սպանալիքով: Բայց Եղիպտոսի Հայերը ա-
ռանձնաշնորհեալ դիրքի մէջ գտնուելով օգտուեցան իրենց
վայելած բացառիկ առաւելութիւններէն, և առանց օրինա-
կան ճամբէն շեղելու, ներկայացուցիչ հանդիսացան Հայ
ազգին Իզմիրեան Մատթէոս Արքեպիսկոպոսին նկատ-
մամբ տածած մեծ յարգանքի ու մեծ համակրանքի ըզ-
գացումներուն, ու ամէն Հայոց շնորհակալութեանը ար-
ժանացան:

Ու հիմա այդ միևնոյն պաշտօնական մարմինները
որ «նկատելով» ին վրայ հիմնուած կը քանդեն իրենց
չինսած գործը: Անշուշտ պիտի չուզեն իրենցմէ ընտրու-
ած առաջնորդին «քաղաքական փափուկ դիրքը» ա-
ռարկել: Այդ դիրքը այսօր ինչ որ է՝ նոյնն էր և 98ին,
երկու տարուան ժամանակամիջոցին պատահած չէ այն-
պիսի նոր դէպք մը զոր կարելի ըլլայ արդի փոփոխմը-
տութեան իբր մեղմացուցիչ պարագայ պատրուակել:
Կա՛մ 1898ին պէտք չէր Իզմիրեանը ընտրել, կա՛մ 1899
ին պէտք չէր զայն տապալել:

Սահմանադրութեան 97րդ. յօդուածը որոշապէս զը-
ծած է առաջնորդական ընտրութեանց վաւերացման հա-
մար կեդրոնական վարչութեան հետեւիք ընթացքը:
Ահաւասիկ այդ յօդուածը. «Առաջնորդի ընտրութիւնը՝
«նոյն եւ նման Պատրիարքի ընտրութեան, Գաւառական
«Ընդհանուր Ժողովով կ'ըլլայ. եւ ընտրութեան տեղե-
«կազիրը տեղւոյն խառն Ժողովոյն միջոցաւ Պատրիար-
«քին կ'ուղարկուի: Պատրիարքը կեդրոնական վարչու-
«թեան խառն Ժողովոյ համահաճութեամբ կ'անուանէ
«զԱռաջնորդը, և Բարձրագոյն Դրան իմաց տալով
«պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի:» Օրէնքին
այս որոշ տրամադրութեան համեմատ խառն Ժողովը
պարտական է ընտրութիւնը բեկանել եթէ կատարուած
ընտրական գործողութիւններուն մէջ ապօրինաւորութիւն
կայ, կամ եթէ ընտրեալը իր ազգային իրաւունքներէն
օրինապէս զրկուած եկեղեցական մըն է: Իսկ երբ օրի-
նական բոլոր ձեւակերպութիւնները յարչուած են, ու
առաջնորդ ընտրուած անձն ալ ազգային պաշտօնավա-
րութեանց համար իր բոլոր իրաւունքները կը վայելէ,
Պատրիարքարանին պարտականութիւնը բացորոշ է: Դու-
որ կարող է ինդրուած հրամանագիրը զլանալ. կեդրո-
նական վարչութիւնը, Դրան զիտողութեանց օրինա-
ւորութիւնը եթէ ճանչնայ, պէտք է հաղորդէ զանոնք
Գաւառական վարչութեան, հանդերձ իր որոշումովը:
Իսկ եթէ կառավարութիւնը իր վաւերացումը կը զլանայ
պարզապէս քմահաճոյքով մը, պատրիարքը Հայոց եկե-
ղեցիին բազմադարեան իրաւունքները պարտաւոր է պաշտ-
պանել: Սակայն Պոլսէն ստացուած տեղեկութեանց հա-
մեմատ, Պատրիարքարանը բնաւ դատական պաշտօնա-
տան չէ ծանուցած Եղիպտոսի առաջնորդական ընտրու-
թիւնը, եւ անոր վաւերացումը չէ խնդրած: Կառավարու-
թիւնը չէր կրնար հաստատական կամ մերժողական պա-
տախան մը տալ իրմէն պաշտօնապէս չպահանջուած
վաւերացման մը համար:

Ուրեմն 1898ի ընտրական գործողութեան մէջ Պատ-
րիարքարանը ապօրինաւորութիւն տեսած է: Ո՛չ: Գահի-
րէի Երեսփոխանական մարմինն Պատրիարքարան խըր-
կուած տեղեկագիրը եթէ օրինական ո՛ր եւ է թերութիւն
երեւան հանած ըլլար, կեդրոնական վարչութիւնը իր
զիտողութիւններովը պիտի վերադարձնէր զայն Գահիրէի
Առաջնորդարանին: Բայց Գում-Գաբուի զիւանատունէն
այդօրինակ զիտողագիր մը դուրս չէ ելած: Հետեաբար

կեղերնական վարչութիւնը ստնակոխ ընելով կ'արհամարհէ այն Սահմանադրութիւնը որուն հաւատարմութիւն ուխտած էր պատրիարքը :

Իսկ Գահիրէի երեսփոխանութիւնը եւ Ալեքսանդրիոյ թաղական խորհուրդը ազգային օրէնքը անդիտակցաբար ստնակոխ ըրին : Կ. Պոլսոյ Պատրիարքարանը, որքան որ մենք գիտենք, ո'չ 1893ի ընտրութիւնը բեկանած է, ո'չ ալ քննադատական ո' եւ է գիտողագիր խըրկած է Գահիրէ : Բայց եթէ Պատրիարքարանը իր իրաւասութեանց սահմաններուն մէջ գործելով, ընտրութիւնը բեկանէր կամ կատարուած գործողութիւնը ապօրէն գտնէր, Եզիպտոսի Հայոց ներկայացուցիչներուն պարտականութիւնն էր կա'մ լրջաբար քննել Պատրիարքարանին հրահանգները եւ անոնց օրինաւորութիւնը ճանշնալով համակերպել, կա'մ, հակառակ պարագային, պաշտպանել Եզիպտոսի Հայոց սահմանադրական իրաւունքները : Այս օրինական գործողութիւններէն ո'չ մէկը կատարուած է : Ուրեմն Եզիպտոսի պաշտօնական մարմինները ինչ արդարացի փաստաբանութեամբ կ'ոչնչացընեն Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսին ընտրութիւնը :

Օրմանեան պատրիարքը եւ վարչապետ Արթին փաշան անհաշտ աչքով դիտած էին այդ ընտրութիւնը որուն սակայն ակներեւ կերպով հակառակելու չէին համարձակեր, օրինական ո' եւ է պատրուակ իսկ իրենց պակսելով : Գաղտագողի ձեռնարկներով սկսան գործել : Մեքենայութեանց պատմութիւնը հանրածանօթ է, չերկարենք անոնց մասին : Եզիպտոսի Հայերը պաշտպանեցին իրենց իրաւունքները, եւ ազդուապէս լսեցուցին իրենց բողոքները, որոնցմով երկու տարի շարունակ չէզոքացուցին Օրմանեան-Տատեան մեղսապարտ ձեռնարկները : Բայց Արթին փաշա չյուսահատեցաւ : Ուզեց ձեռք առնել Եզիպտոսի երկու վարչական մարմինները եւ անոնց միջոցաւ իր նպատակին հասնել :

Այդ տապալումով, որ պետական հարուած մըն է, Եզիպտոսի Հայոց ներկայացուցիչները գործնականապէս հարուածեցին Թիւրքիոյ Հայոց նախորդ Պատրիարքը, ու միանգամայն հայկական խնդիրը : Վասն զի ինչո՞ւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը այդ ընտրութեան բեկանումին աշխատեցաւ ողի ի բռին : Այդ աշխատութեան պատճառը Արթին փաշա իր անհատական նամակներուն մէջ յըստակ կերպով պարզած է : Իզմիրլեանի աննպաստ ուրիշ ո' եւ է առարկութիւն չէ գտած բայց եթէ սուլթանին անձնական տհաճութիւնը : Այդ տհաճութեան շարժառիթն է նախորդ Պատրիարքին Հայաստանի վիճակին բարեփոխմանը համար կատարած աշխատութիւնները : Այդ ընտրութեան բեկանումովը Եզիպտոսի Հայոց պաշտօնական մարմինները պարզապէս սուլթանին հակահայկական քաղաքականութեան նպաստած եղան. ուրիշ ոչինչ : Իրենց այս փութաջանութիւնը անբացատրելի է այն պատճառաւ որ ո' եւ է ստիպողական հարկ մը չէր ներկայանար նոր առաջնորդի մը ընտրութեանը համար :

Եզիպտոսի հայերը ո'չ կառավարական խնդիր ունին, ո'չ ալ շատ կ'ընտան գործեր : Երկու փաշա իրենց վերին հսկողներն են, եւ առաջնորդական տեղագահով մը, զրո ունէին, կրնային գոհանալ երկար ատենի մը համար, որով սուլթանին ու իր արքանեակներուն կամախատարները ըլլալէ ազատ կը մնային : Ինչո՞ւ Եզիպտոսի Հայերը չմտաբերեցին թէ Հայաստան, ուր կենսական կարևորութիւն ունեցող այնքան խնդիրներ կան, առաջնորդական աջո՞ւնները պարապ մնացած են, ու պատրիարքարանը բնաւ հոգը չ'ընեն առաջնորդներ ընտրել տալ. շատ թեմեր տեղապահներու միջոցաւ կը կառավարուին միայն : Պատրիարքարանը առաջնորդական ա'յն պարապ աթոռներուն համար ընտրութիւններ ընել կուտայ, որոնց օրինաւոր տէրերը իրենց ժողովուրդին շահերը պաշտպանած ըլլալու ոճրագործութիւններնուն համար աքսորաւայրերը կը փտտին :

Եզիպտոս գործուած այս հակասահմանադրական գործը ժողովուրդին լռին անտարբերութեամբ կրնար միայն յաջողիլ : Երկու տարի է Ալեքսանդրիոյ եւ Գահիրէի Հայերը, առանց բնիկի ու եկւորի խտրութեան, պաշտպանեցին Իզմիրլեանի գաղտը, որ ընդհանուր ազգային իրաւունքներուն գասն է. ուստի եւ Օրմանեան-Տատեան բոլոր ձեռնարկները պարապ ելան : Բայց այսօր այդ Հայերը խուլացան, տկարացան, ու զենընկեց եղան :

Այդ ժողովուրդը զեռ երէկ հրապարակային միութիւններ կը գումարէր եւ սուլթանին դէմ Հայութեան բողոքները կը հասցնէր Լա Հէ ուր հաւաքուած էին աշխարհի քաղաքական ներկայացուցիչները. ու այսօր այդ ժողովուրդը խոնարհ յարչանցով կը հպատակի Հայոց ռեբրիմին հրամաններուն որ Պատրիարքարանէն իրեն կը փոխադրուի : Այդ ժողովուրդը զեռ երէկ Թիւրքիոյ Հայոց պատրիարքը ուխտադրուծ գաւաճան մը կը հոշակէր, վասն զի սահմանադրութիւնը ստնակոխ ըրած էր, ազգային իրաւունքները բռնաբարած, ու այսօր ինք անտարբեր հանդիսատես մըն է իր աչքին առջեւ կատարուած հակասահմանադրական գործի մը :

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԹԻՒՐԿԵՐԸ. Լոնտոնի օսմանեան դեսպանատունը ակգիւսիան քերթերուն կը հաղորդէ հետեւեալ հետազոտը .

Կ. Պոլիս, 2 յունուար. — Դուռը պաշտօնական տեղեկութիւններ կուտայ Հայ յեղափոխականներու կողմէ օսմանեան հողիւ վրայ կատարուած վերջին արշաւանքներուն առթիւ : Վաշերական զեկոչոցումներու համեմատ, իրողութիւնը հետեւեալն է .

Էրզրումի կուսակալը հետագրած է քէ 100ի չափ

Հայ Ռուսիայէն սահմանագրոշխար անցեր եւ Ալաշկերտի Բեօու Տաղի մօտ և գրաւեր եւ Խաչի գիւղի վանքը, սպաններով մեկ քանի բնակիչ ինչպէս եւս մեկ քանի քիչրք զինուոր: Կայտերական պարտը ժանեզագրով մը այս իրողութիւնը հաղորդած է ձեկտեմբեր 27ին արտաքին գործերոշ նախարարին: Ժանեզագիրը կը յարեքէ այդ հայ սուպտակները անշոշտ պարսկական սահմանագրիսէն դառնարով էր որ կրցեր էին այդ սահմանագծէն անցնիլ: Եկատելով որ արշառողները անշոշտ Մազգիր հրացաններով ու փամփոշտներով զինուած էին, օսմանեան կառավարութիւնը Ռուսիայէն պահանջած է յանցաշոշտներուն պատժոշխը:

Դեկտեմբեր 2ին ալ, Վանի կոշտակալը հեռագրած է քէ 11 Հայ սահմանագրիսէն անցեր եւ թֆայիս (՝), Պարկիրի գաշառակին մէջ, և քէ այդ յեղափոխականներէն 3ը բանուշեր և 6ը սպաններ եւ քիչրք հեծելագօրքէն, որոնք 6 մեռեալ և 8 վիրաշոշոշ ունեցեր եւ կրսոշին մէջ:

Դեկտեմբեր 4 քոշականով, նոյն կոշտակալը կ'իւնացրէն քէ Հայեր նորէն սահմանագրոշխար անցեր եւ թֆայի մօտ, քէ 21 հոգի եւս, նոյնպէս Մազգիր հրացաններով զինուած: Կոշտակալը կ'աշեղցնէ քէ կոշու մը տեղի ունեցեր է այդ Հայերուն և օսմանեան զինուորներուն միջև, և քէ քոշոր Հայերը սպաններ եւ կոշոշին մէջ, թիչրքերուն կորոշաւ ըլլարով 7 մեռեալ և 4 վիրաշոշոշ:

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՔ նոր խեղրագիր մը մատոշցանելով սոշխանին, Վանի և Բաղէշի մէջ կատարուած շարագործոշքեանց հեղիւնակներուն պատժոշխը խեղրեր է: Սոշխանը խոստացեր է ամեկնախիստ քննոշքիւն մը քանալ, եւ էք տեղի կայ, շարագործները պատժել:

ԷՐՁՐՈՒՄԻ միսիոնար Պ. Չեմպրոյ, որ 20 տարի է վեր կը գործէր հոն կենըն հետ, այժմ Առանա փոխաղրոշեր է: Պ. Չեմպրոյ, իր քան տարուան գործունեոշքեան մեկ համառօտոշքիւնը ներկայացնելով, հետեւեալ քոշակները կոշտայ 1878ին, 1888ին, 1898ին: Միսիոնարական կայաններուն քիւն էր 1878ին 12, 1888ին 22, 1898ին 24: Գործիչներուն քիւն 12, 35 և 25: Բողոքականոշքեան յարողներուն քիւն 601, 2200 և 1500: Եկեղեցիի անդամներուն քիւն 83, 250 և 392: Դպրոցներուն քիւն 7, 20 և 19: Մանչ և աղջիկ աշակերտներուն քիւն 244, 618 և 800: Հաշարուած դրամը 239, 1050 և 1000 տղար:

ԹԻԻՐԲԻՈՅ ՎԻՃԱԿԸ. Օրէ օր կը սաստկանայ թիւրքիոյ ներքի' տագնապը: Թե' Պոլիս և քէ գաշառները քրիստոնեայ ու իսլամ ամենքն ալ ժայրայեղ տառապանքներու մատնուած եւ: Սոշխանին քեռայրը Տաւատ Մանուշտ փաշա որ Պոլսէն Եշրոպա փախաշ, քրանսերէն քերքերու միջոցաշ իր աներձագին ուղղած նամակով մը կը յայտարարէր քէ անրոջ կայարաշքիւնը կառավարողները աշագակներ, ողորմելի տգոններ, անկար ծերունիներ եւ, ամենքն ալ ուրիշ մտածոշքիւն

չունեկալով քայց էք սոշխանին հաճոշխատար հանդիսանալով կեղեքել էրկիրը:

Ընդհանուշքիւն գիտցած շշտարաշքիւնն է աւ որ արքայական տան պատկանող անձի մը քերնովն ալ կը հաստատուշի: Այս աւրիւ Աքեկքէն յոշեոշար 14ին հետեւեալ տեղեկոշքիւնները հաղորդած եւ Սթանտարտի. «Բարձր դիրք ունեցող անձնաշոշտոշքիւն մը որ շատ տարի Պոլիս ապրած է, եւ թիւրքիոյ գործերուն քաշատեղեակ է, կը հաշատեք քէ Տաւատ Մանուշտ փաշային իր աներձագին գրած քայց նամակին պարոշեակոշքիւնը կատարելապէս շշտարիտ է: Թիւրքիոյ մէջ էրքեր հիւնակոշտանին նման կառավարական ապականոշքիւն և վատար վարչոշքիւն էք գտնուած: Սոշխանը ամեկն քան պարտականներուն կամքին քողած է: Եանանգներուն ժողովաշքը մատնուած է գաղտնի ուստիականոշքեան ուրուն միակ նպատակն է ստակ շիւնել: Ծանր վախձան մը շիրնար շատ ուշանալ:»

ԲԱՂԵՇԻ նահանգիւն մէջ տիրող սնաշոշ խեղձոշքեան մեկ սրտամոշիկ նկարագրոշքիւնը կ'ընէ Պատ. Գոլ. «...Աշարաշքիւնները անցեալին շաք ընդհանուշքէն, քայց հարկերը ժայրագոյն անգորշքեան կը հաշարուշին: Աղրատները, ուտելիքի, հագնելիքի եւ անհատնոշ հարկի համար միշտ դրամի կարօտ, իրենց հոշեքը և էրքեմն տոշեր իսկ գրաշի դրած եւ տեղ տեղ, ինչպէս Գատիկ, Էրոշ, Ախլար և այլն. ու յաճախ կը հանդիպի մարդ սրտամոշիկ տեսարանին ընտանիքի մը որ լալով ու ձեռոշքիւն գալարելով մեկդի կեցած է, միւնդեա ամեկիւրոշքները կը սրեկ կը տակն կային աւրոջ ցրեկը, հատիկ մը շրոլով այն անօքիներուն որ հնձած եւ գայն: Կը ձանչնաւ խեղձիկն մը որուն քան շարեղեկները և միակ էշը ամեկի յետոյ, զինքն ալ ծեծեցին: Արգէն, քիւ շատ յարմար սնանդի պակար անսելի կերպով սկսած է աղղել ժողովրդին վրայ, հիւանդոշքիւնները և մահացոշքիւնը շատցած եւ:»

Բաղէշի առաշերոջը, կարգ մը ժողովականներով, Պատ. Գոլի դիմած է, ձմրան աւրիւ նորէն նպատ խեղրելով: Պատ. Գոլ յայտարարէր է քէ ալ իրէն անկարելի է օգնոշքեան հասնիլ տիրող քոշառաշքեան, «որովհետեւ մեք ալ վհատած եւնք և ինքզինքնիս քոշրոլիս անկարող կը գգանք մեղ շրջապատող դոշարուշքեանց յարքեր:»

Ո'վ պիտի օգնէ այդ խեղձերուն:

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԾՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵՄՆԻՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկիւ առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵՄՆԻՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 15ին: Բաժնեգինն է Երոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 քրանց, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տղար: